

Պատմության մեջ Իլյա պատրիարքը կմնա որպես Վրաց եկեղեցու ամենատեւական հովվապետություն ունեցած կաթողիկոս-պատրիարքը: Միաժամանակ՝ կմնա որպես ազգային-եկեղեցական գործիչ, որը կարողացել է համադրել իր մեջ այնպիսի հատկանիշներ, որոնք առաջին հայացքից խիստ դժվար համադրելի են, չասելու համար՝ անհամադրելի են:

Կարդացեք՝ էջ 6

Մենք՝ ներքոստորագրյալ լրագրողներս, խոնարհաբար դիմում ենք Ձերդ Վսեմությանը, խնդրելով մեզ տրամադրել բառարան, որը կհաստատվի անձամբ Ձեր կողմից, կկնքվի եւ կպարունակի այն բառերի, բառակապակցությունների ու նախադասությունների ցանկը, որոնք թույլատրելի են կիրառել՝ առանց Քրեական օրենսգրքի թիրախ դառնալու:

Կարդացեք՝ էջ 7

Զոտը կտրուկ բարձրանում է, թոքային անբավարարություն, ասթմա, ճնշում, շնչահեղձ է լինում: «Արմավիրից» էտապ արեցին «Սեւան» ու էլի հետ բերեցին: Ո՛չ բուժել կարող են, ո՛չ էլ բաց են թողնում: Հիմա բերդ ենք ուղարկել, թե՞ մահվան: Հիվանդանոցները չեն ընդունում, հետո՞ ինչ, որ դատապարտյալ է, ուրեմն պետք է մեռնի՞:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

www.hraparak.am

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 43 (4178), 21 մարտ, շաբաթ, 2026

Փաշինյանի հրահանգով՝ կառավարությունում ակտիվ աշխատում են նոր օրինագծի վրա, որով պատրաստվում են պայքարել «ատելության խոսքի» դեմ: Այն ընդդիմության եւ ԶԼՄ-ների նկատմամբ հերթական զսպաշապիկը կլինի: Ընդ որում, այլ ուղղություններով էլ են աշխատում՝ օրինակ, ֆինանսական թափանցիկություն ապահովելու, հավատարմագրումից զրկելու մեխանիզմներ ներդնելու, եւ անգամ ԶԼՄ-ներ փակելու պլաններ ունեն, բայց դրանք կիրականացվեն, եթե հունիսի 7-ին վերարտադրվեն: Ի դեպ, այս մշակումներին ներգրավված են ԱԺ գիտության, կրթության հանձնաժողովը, որի նախագահը նախկին լրագրող Սիսակ Գաբրիելյանն է, «Հանրօգուտ մեդիամիջավայր» հիմնադրամը, որի տնօրենը եւս նախկին լրագրող է՝ Վահագն Թեւոսյանը, եւ նախարար Սրբուհի Գալյանի խորհրդական Լյովա Սարգսյանը: Արդեն «Ատելության խոսքի դեմ պայքարի նոր կառուցակարգերի ներդրման» վերաբերյալ տեղեկանք է կազմվել, ըստ որի՝ քաղաքացիական եւ վարչական պատասխանատվություն է սահմանվելու՝ փոփոխություններ կկատարվեն օրենսգրքերում, մեծ տուգանքներ կսահմանվեն՝ նվազագույն աշխատավարձի 3000-ապատակից մինչեւ 6000-ապատիկի չափով: Բայց խնդիրն անգամ տուգանքը չէ, այլ՝ այն, որ իշխանությունը որոշել է խեղաթյուրել ատելության խոսքի դեմ պայքարի գաղափարը եւ սահմանել է, որ նման խոսք է համարվում ոչ միայն ռասայական, ազգային, էթնիկ, կրոնական հայացքներով պայմանավորված անհանդուրժողականություն, ատելություն, խտրականություն քարոզող խոսքը, այլ նաեւ «քաղաքական հայացքներով» պայմանավորվածը, իսկ դա նշանակում է, որ կպատժվեն, օրինակ, ՔՊ-ի դեմ սոցցանցում գրառում անողները:

ՔՊ-ում ընտրակեղծարարների որսը կարծես ավարտված է՝ ներկուսակցական ընտրություններից հետո 3 ՔՊ-ականի են հանել ցուցակից՝ Կարեն Գրիգորյանին, Դավիթ Դանիելյանին, Հայկ Ավագյանին: Մեր աղբյուրներն ասում են, որ թեպետ այլ կասկածյալներ էլ կան, բայց աղմուկն իրենց օգտին չէ, եւ որոշել են գործընթացը չշարունակել: Չէ՞ որ Նիկոլ Փաշինյանը պարծենում է, թե իր օրոք ընտրությունները չեն կեղծվել, մինչդեռ արդեն 2-րդ անգամ ներկուսակցական ընտրություններն են կեղծում: Ի դեպ, Վայքի տարածքային կառույցի անդամ Հայկ Ավագյանին անցած շաբաթ հեռացրել են վարչությունից. նրա դեմ 6-7 բողոք է եղել, այդ թվում՝ պատգամավորներ Տրդատ Սարգսյանի, Արման Եղոյանի կողմից: Ապացուցվել է, որ նա զանգել է տասնյակ պատվիրակների եւ ասել՝ ես քեզ եմ ընտրելու, ակնկալում եմ, որ դու էլ փոխադարձաբար ինձ կընտրես:

Բախտներս չի բերել

Գլխիվայր շրջված իրականության մեջ ենք ապրում: Փոխանակ ընդդիմությունը սպառնա ու վախեցնի հանրությանը՝ փաստերով ու ապացույցներով ներկայացնելով, թե ինչի կարող է վերածվել մեր երկիրը, եթե շարունակի պաշտոնավարել Նիկոլ Փաշինյանը, եւ իշխանության մնա ՔՊ կուսակցությունը, ճիշտ հակառակն է տեղի ունենում՝ իշխանությունն է վախեցնում միամիտ, դյուրահավատ, ինֆորմացիայի պակաս ունեցող մարդկանց: Պարզ է, որ ընդդիմության շրջանում չկան Փաշինյանի նման հմուտ մանիպուլյատորներ, ստելու ընդունակ, հռետորական ձիրքով մարդիկ: Եվ ընդդիմությունը չունի այն լսարանն ու իր ասածները տիրաժավորելու հնարավորությունը, ինչպիսին ունի իշխանությունը, որն այդ հնարավորությունները ոչ թե ի սպաս երկրի է ծառայեցնում, այլ՝ ընդդեմ իր ժողովրդի, հանուն վերընտրվելու: Մի կողմից ցավալի է, որ 18-ին իշխանության եկած այս երիտասարդներն այդպես էլ չհասկացան, թե ինչ է երկիր կառավարելը, եւ ինչ մեծ պատասխանատվություն են իրենք իրենց ուսերին վերցրել, որ պետություն ղեկավարելը խաղուպար չէ, ոչ էլ պետությունը փորձադաշտ է, որի վրա դու էքսպերիմենտներ դնես ու քո գիտելիքների պակասը՝ սխալվելով ու սայթաքելով, մեծ դժվարությամբ լրացնես: Բայց առանձնապես ընդունակ եւ ճկուն չգտնվեց նաեւ մեր ընդդիմությունը: Ճկուն՝ ոչ թե այն իմաստով, որ չկարողացավ իշխանափոխություն անել եւ այս քանդարարներին հեռացնել պետության ղեկից, այլ չկարողացավ յուրացնել աշխարհի բոլոր երկրների ընդդիմություններին բնորոշ աշխատաոճը, մասսաներ գրավելու մեթոդները, իշխանության դիմակը պատռելու եւ ստերը մերկացնելու շնորհքը: Չկարողացավ իր խոսքը հասանելի դարձնել այս մի բուռ ժողովրդին, որին կարելի էր այս տարիներին հատ-հատ հանդիպել եւ բացատրել իրականությունը՝ Փաշինյանի հացը ձեռից խլելով:

ՔՊ-ում նախնական որոշում ունեն, որ «ուրախ ավտոբուսով» ներկուսակցական քարոզարշավ Երեւանում չեն իրականացնի: Պաշտոնապես դա կփաթեթավորեն, թե Երեւանի վարչական շրջանները շատ են, եւ չեն հասցնի բոլոր տեղերում լինել, սակայն իրականում հասկանում են, որ Երեւանում իրենց դիրքերն անհամեմատ թույլ են, եւ չեն կարող բնական ու իրենց համար շահեկան տեսարաններ բեմադրել: Ուստի եկող շաբաթ կուսակցության կենտրոնական գրասենյակում, ըստ ամենայնի, կհավաքվեն՝ «մենք մերոնցով», եւ եզրափակիչ քարոզարշավը կտան փակ ֆորմատով: Իսկ այս շաբաթ «ուրախ ավտոբուսի» ուղեւորները պատրաստվում են այցելել Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզեր:

ԱԱԾ ՏՆՕՐԵՆԸ ՓՈՐՁԵԼ Է ՊԱՐԶԵԼ՝ ՈՎ Է ՄԵՐ ԱՂԲՅՈՒՐԸ

ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովում երեկ ուժայինների ղեկավարները ներկայացնում էին կառավարության ծրագրի 2025 թ. կատարողականը, որոշ մասը՝ փակ ռեժիմով: Տեղեկացանք, որ ԱԱԾ տնօրեն Անդրանիկ Սիմոնյանը խիստ հուզվել է նախորդ փակ նիստից իր անձի վերաբերյալ արտահոսքից, մասնավորապես «Հրապարակի»՝ իր առանձնատան մասին հրապարակումից, եւ փորձել է «բացահայտել», թե ով է «սլիվ» արել: Հիշեցնենք. այդ նիստի ժամանակ հարց են տվել, թե ճի՞շտ է, որ դուք կամ ձեր հարազատներից մեկը 1.5 մլն դոլարով տուն եք գնել Վահագնի թաղամասում: Սիմոնյանը խուսափել է ուղիղ պատասխանից, թե դրանք անձնական տվյալներ են, իրավունք ունի չպատասխանելու: Այդ պատասխանն անակնկալի է բերել նիստին ներկա ՔՊ-ականներին, եւ Զարուհի Բաթոյանը կրկնել է հարցը, սակայն նա անդրդվելի է մնացել: Ի դեպ, երեկ ՔՊ-ականներն ակնհայտորեն բոյկոտեցին նրա հետ փակ հանդիպումը, ներկա էին միայն հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը եւ Նարեկ Ղահրամանյանը, որը հանձնաժողովի անդամ չէ: Իսկ հանձնաժողովի փոխնախագահ Արմեն Խաչատրյանը, անդամներ Քրիստինե Պողոսյանը եւ Հայկ Սարգսյանը բացակայում էին: Վահագն Ալեքսանյանը, Գուրգեն Մելքոնյանը, Արտյոմ Մեհրաբյանն այդ ընթացքում դուրս էին եկել սենյակից: Ընդդիմադիրներից ներկա էին Գեղամ Մանուկյանը, Աննա Գրիգորյանը, Թագուհի Թովմասյանը, Քրիստինե Գրիգորյանն ու Արգիշտի Գեւորգյանը: Տեղեկացանք նաեւ, որ Արտաքին հետախուզության ծառայության պետ Քրիստինե Գրիգորյանն էլ փակ նիստում կտրականապես հրաժարվել է հստակ պատասխանել թե՞ հիբրիդային պատերազմի մասին, թե՝ որ երկիրն է այդ պատերազմը մղում եւ թե՞ արտերկրում մեր քաղաքացիներին ճնշելու միջոցով ընդդիմության օգտին քվեարկելու պարտադրանքի մասին իր իսկ կառույցի հայտնած տեղեկությունների վերաբերյալ:

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՐ ԱՅՍ ՊՈՒԼՈՒՄ՝ ՃԱՄՊՐՈՒԿՆԵՐԸ ՀԱՎԱՔԵՐ ՈՒ ՀԵՌԱՆԱ՞Ր ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

*«Հրապարակի» զրուցակիցն Աժ նախկին պատգամավոր **Գագիկ Մինասյանն** է:*

- Նախընտրական քարոզարշավն օրեցօր ակտիվանում է: Իշխանություններն ընդդիմության մասին խոսելիս ավելի կոշտ բառամթերք են օգտագործում: Նիկոլ Փաշինյանն ընդդիմադիր լիդերներին առաջարկում է «արհամարհել» բառն անսխալ գրել կամ, որպես մարտահրավեր, հարցրել է, թե որն է Իսպանիայի մայրաքաղաքը. «Ուժեղ տղա եք, ասեք, թե որն է Իսպանիայի մայրաքաղաքը»: Ի՞նչ կարծիք ունեք այս պրոցեսների մասին:

- Նիկոլ Փաշինյանի բառապաշարը, նրա հայտարարությունները չեն կարող զարմացնել նրանց, ովքեր արդեն յոթ-ութ տարի է՝ հետեւում են այդ մարդուն: Նրա լեքսիկոնին, վարքագծին այս բոլոր հայտարարությունները խիստ համահունչ են, ուրիշ ի՞նչ կարող է նա ասել այս փուլում, հատկապես այն պարագայում, երբ առաջիկա ընտրությունների հետ կապված կանխատեսումները լրիվ այլ բան են ասում եւ Փաշինյանի համար, վստահաբար, բավականին մտահոգիչ են: Ոչ միայն վերլուծաբաններն են ասում իրենց տեսակետն այն մասին, որ Նիկոլ Փաշինյանի վիճակը վատ է, այլեւ կան հարցումներ, որոնք եւս փաստում են այդ մասին: Այն, ինչ կատարվում է ընդդիմադիր դաշտում, ես կարծում եմ, որ բավականին հաջողված է եւ հաջողված էլ զարգացում է ապրում օրեցօր: Ընդդիմադիր թեւին կարող ենք երկու հատվածի բաժանել՝ մի հատվածը մշտապես եղել է բարիկադների վրա եւ այս ազգակործան պատուհասի գործողությունների դեմ մի քանի շարժումներ է իրականացրել՝ փորձելով իշխանությունից հեռացնել այս դավաճաններին, ինչը բոլորս ենք հիշում: Եվ մենք ունենք մի ընդդիմադիր թեւ, որը փորձում է հաջողության հասնել տնտեսական հարցերի լուծման ճանապարհով: Ցանկացած երկրում էլ կա հասարակության մի ստվար զանգված, որին ամենաշատը հետաքրքրում են հենց տնտեսական հարցերը, եւ այն շատ բնական է:

- Իսկ ո՞ր քաղաքական ուժերն են ավելի շատ սոցիալական հարցերին ուշադրություն դարձնում՝ ըստ Ձեզ:

- ԲՀԿ-ն եւ Սամվել Կարապետյանի ուժը: Նրանք կարողացել են մոբիլիզացնել հասարակության այն հատվածին, որը, լինելով դեմ օրվա իշխանություններին, այդուհանդերձ, կողմ չէ արմատական ընդդիմության պայքարի ճանապարհին: Ես կարծում եմ, որ մեր հանրության ավելի լայն հատվածը հավաքվելու է այս երկու ուժերի շուրջ: Ես ուսումնասիրել եմ տարբեր երկրների փորձը եւ կարող եմ վստահաբար ասել, որ նման գաղափարախոսությամբ ուժերը սպասվածից շատ ավելի ձայներ են ստանում, եւ դա շատ բնական է, նորմալ է: Մեր քաղաքական խճանկարը եւս կարող ենք այդպես նկարել՝ ընտրություններին ընդառաջ:

- Բայց Նիկոլ Փաշինյանը վստահ է, որ թոշակները մի քանի հազար դրամով բարձրացնելով, որոշ բժշկական ծառայություններ անվճար դարձնելով՝ ինքն է ընտրություններում հաղթելու: Նա անգամ ասաց, որ վստահ է՝ եթե ՌԴ-ից հայեր գան ընտրության, բացառապես իրեն են ընտրելու: Այսինքն՝ նա ինքնախաբեությամբ է զբաղվում, կեղծում է անգամ իր ինքնավստահությունը:

- Նա ընկալում է իրականությունը, եւ պատկերացնում եք, թե ինչպես է վերաբերվում իրականությանը, այն իրականությանը, որը ես նկարագրեցի.... ի՞նչ պետք է նա աներ այս փուլում՝ ճամպրուկները հավաքեր ու հեռանա՞ր Հայաստանից: Նրա կեցվածքը շատ բնական է: Միայն այն հանգամանքը, որ նա չէր նախատեսել թոշակների բարձրացում եւ հանկարծ՝ միանգամից նման քայլ արեց, եւս մեկ անգամ փաստում է այն մասին, որ ՔՊ-ի համար իրավիճակը շատ լուրջ է: Ի դեպ, դա արեց բավականին աճպարար ձեւով: Նա խոսում է 10 հազար դրամից, սակայն անգամ 10 հազարով չի կարողացել թոշակները բարձրացնել, եւ հետո՝ ի՞նչ պետք է ասեր այն ղեկավարը, որն ահավոր ամբարտավան արշավ էր սկսել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու դեմ, սակայն այժմ նահանջում է: Արդեն երեք տիրադավ դուրս է եկել այդ շարժումից, իսկ մյուսներն անիծում են այն օրը, երբ կանգնեցին Փաշինյանի կողքին: Ի դեպ ասեմ, որ առողջապահության ոլորտում իրավիճակը եւս սարսափելի վատ է: Ամեն ինչ չծրագրված, չմտածված: Ինձ պատմեցին, որ աչքի խնդիր ունեցող մարդուն, որի վիճակը կրիտիկական է, հերթագրել են, եւ հերթը հասնելու է մի քանի ամսից: Պատկերացնո՞ւմ եք, թե դա ինչ է: Բժիշկները համատարած դժգոհում են այդ ամենից եւ կարծում են, որ Փաշինյանը հերթական ամբոխահաճո քայլն է արել, առանց որեւէ հիմնավորումների: Նա գիտի, որ իրավիճակը մտահոգիչ է, եւ այս պարագայում ի՞նչ կարող է անել՝ միայն պոպուլիզմ, ինչով որ եկել է իշխանության: Մարզեր կատարած այցերը, մարդկանց հարցերը՝ ուղղված վարչապետին, եւ առհասարակ մարդկանց պահվածքը ցույց են տալիս, որ պոպուլիզմն այլեւս ոչ մի ազդեցություն չի թողնում մարդկանց վրա: Անգամ չենք խոսում 7-8 տարի առաջվա նրա վարկանիշի մասին, բավական է միայն համեմատել 3-4 տարի առաջվա հետ, եւ ամեն բան պարզ կդառնա: Եթե նա ծայրահեղ քայլերի չգնա, չի վերարտադրվի: Արդար մրցակցության պայմաններում այս մարդը չունի շանս:

- Իսկ որո՞նք են ծայրահեղ քայլերը:

- Դրանք այն քայլերն են, որոնք նա իրականացնում է քաղաքական առաջնորդների, հոգեւոր առաջնորդների, ՁԼՄ-ների նկատմամբ եւ այլն: Նա այդ զենքերն օգտագործելու է՝ բոլոր բնագավառներում ահուսարսափ ստեղծելու համար: Իր ԵՄ-ի հովանավորները նրան ոչ միայն ֆինանսապես են հովանավորում, այլեւ՝ հայտարարություններով: Նրանք ցանկանում են, որ Փաշինյանն ամեն գնով հաղթի: ԵՄ երկրների կեցվածքն այս պարագայում շատ բնական է, նրանք կորցրել են Վրաստանին, եւ տարածաշրջանի իրենց միակ հենման կետը Հայաստանն է մնում: Նրանք էլ առաջիկայում շոուներ կբեմադրեն Հայաստանում, կխոսեն ԵՄ-ին անդամակցության, վիզաների ազատականացման մասին եւ կփորձեն այս վատ իրավիճակում Փաշինյանին լավ ձեւով ներկայացնել՝ հասարակությանը ներշնչելով, որ նա է հաղթող ուժը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԲԱԲՎԻՆ ՕԳՆԱՍ ՀՐԵԱ ԳԵՆԵՐԱԼԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԸ ՔԱՐԿՈՏՈՒՄ Է

Զրաց փոփոխվող աշխարհում եւ բարդ տարածաշրջանում Հայաստանի գոյատեւման միակ ձեւը հզոր լինելն է. այսպես է ձեւակերպել «Ուժեղ խաղաղություն» անվտանգային ծրագրի իրենց կոնցեպցիան Իսրայելի հակաօդային պաշտպանության ուժերի նախկին հրամանատար, բրիգադային գեներալ, «Ուժեղ Հայաստան» կուսակցության թիմի փորձագետ Ցվիկա Հայմովիչը: Նրա խոսքով, աշխարհաքաղաքական իրավիճակը լի է մարտահրավերներով ու սպառնալիքներով, այն արագորեն փոփոխվում է, իսկ տարածաշրջանում իրավիճակը պայթյունավտանգ է. «Բայց մենք պետք է մարտահրավերներին հակազդենք աշխատանքով եւ լուծումներով: Ազգային անվտանգության ծրագիրը կողմնացույց եւ ուղեցույց է մեր որոշումների համար, որն ուղղված է զինված ուժերի ամրապնդմանը: Ես ավելի քան 30 տարի ծառայել եմ բանակում եւ գիտեմ, թե ինչ է նշանակում պաշտպանել սեփական ժողովրդին ու հողը: Այսօր սպառնալիքները շատ են, բայց մենք գիտենք, թե ինչ անել, եւ ինչպիսին պետք է լինեն զինված ուժերը, ինչ քայլեր ձեռնարկել, որպեսզի Հայաստանի բանակը լինի հնարավորինս հզոր»:

Ըստ գեներալի, անվտանգությունը պահանջում է ուժեղ առաջնորդություն եւ ճիշտ որոշումների կայացում. «Ուժեղ պաշտպանությունը ստիպում է հակառակորդին զսպվածություն ցուցաբերել: Գոյատեւելու միակ ճանապարհն ուժեղ լինելն է»: Նրա ներգրավվածությունն «Ուժեղ Հայաստանի» թիմում որոշակի հարցեր, եթե չասենք՝ տարակուսանք է առաջացրել Հայաստանում՝ այն իմաստով, որ հրեա գեներալն իր կենսագրությունում նաեւ առնչություն է ունեցել Ադրբեջանի հետ: Բաքվի արձագանքն էլ հիստերիկ է, ինչպես միշտ: Բայց հիմքը Սամվել Կարապետյանի գործոնն է: Հայաստան պարբերաբար այցելող քաղաքագետ, ալիեւյան կլանի քարոզչական ներկայացուցիչ Ֆարհադ Մամեդովի շուրթերով, Բաքվի արձագանքն այսպիսին է. «Հայաստանում քաղաքական լարվածության աճի ֆոնին, Կրեմլին հավատարիմ միլիարդատեր Սամվել Կարապետյանի գլխավորած «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը ներկայացրել է թարմացված «ազգային անվտանգության հայեցակարգ»: Փաստաթղթում շեշտը դրվում է զինված ուժերի արմատական ամրապնդման, ՀՕՊ համակարգերի արդիականացման եւ պետական սահմանների պաշտպանության նոր մոդելի ներդրման վրա: Ծրագիրը ներկայացրել է ղարաբաղյան հակամարտության վետերան Արթուր Ավանեսյանը, որի դեմքին կան երկրորդ ղարաբաղյան պատերազմի սպիները: Դատելով ներկայացման մասնակիցների կազմից՝ Կարապետյանի քաղաքական կոալիցիայի միջուկը կազմում են նախկինում ղարաբաղցի անջատողականների զինված ուժերում ծառայած կադրային սպաները: Սակայն գլխավոր սենսացիան ռազմավարության մշակման գործում օտարերկրյա խորհրդատուի՝ թոշակի անցած Իսրայելի պաշտպանության բանակի բրիգադի գեներալ Ցվիկա Հայմովիչի ներգրավվածությունն էր: Հայմովիչը, որը 2015-2018 թվականներին հրամանատարել է Իսրայելի ՀՕՊ ուժերը, այժմ ծառայում է որպես հայկական ընդդիմության՝ ՀՕՊ հարցերով հիմնական խորհրդական»:

Մամեդովի խոսքով, «Նիկոլ Փաշինյանին տապալել ձգտող ընդդիմադիր ուժերը զգուշորեն են գործում: Խուսափելով բացահայտ ռեւանշիստական հռետորաբանությունից՝ նրանք, այնուամենայնիվ, Ադրբեջանի հետ կնքված ներկայիս համաձայնագրերն անվանում են «անարդար» եւ խոստանում են «երկարատեւ խաղաղության» հասնել ռազմական հզորության ավելացման միջոցով: Փաշինյանը՝ ինքը, միանշանակորեն, իր հակառակորդներին դասակարգում է որպես «պատերազմի կողմ»: Նա պնդում է, որ Կարապետյանի հետ համախոհ ուժերի իշխանության գալն անխուսափելիորեն կհանգեցնի լայնածավալ հակամարտության նոր փուլի՝ մի քանի ամիսների ընթացքում: Այն փաստը, որ տնային կալանքի տակ գտնվող Սամվել Կարապետյանն իր քարոզարշավը սկսեց ռազմական մանիֆեստով, հաստատում է, որ ռազմական բարեփոխումների համար պայքարը դառնում է առաջիկա ընտրությունների կենտրոնական թեման»:

Ադրբեջանցի փորձագետը խոստովանում է, որ Ցվիկա Հայմովիչը հայտնի դեմք է. «Ցվիկա Հայմովիչը համաշխարհային դեմք է ավիատիեզերական պաշտպանության ոլորտում: Նրա ռեզյումեն ներառում է այնպիսի համակարգերի շահագործման ղեկավարումը, ինչպիսիք են «Երկաթե գմբեթը», Arrow-3-ը եւ «Դավթի պարսատիկը»: Այսօր նա աշխատում է որպես մասնավոր ռազմավարական խորհրդատու, ինչն Իսրայելին պաշտոնապես ազատում է նրա գործունեության պատասխանատվությունից: Այնուամենայնիվ, պաշտոնական Երեւանն այս նշանակմանը վերաբերվում է անթաքույց կասկածամտությամբ: Քննադատները նշում են, որ հենց Հայմովիչն է, որ իր ծառայության ընթացքում վերահսկում էր Բաքվի հետ ռազմատեխնիկական համագործակցությունը, այդ թվում՝ Barak-8 զենիթահրթիռային համակարգերի եւ ELM-2084 ռադարների մատակարարումը, որոնք վճռորոշ դեր խաղացին հայկական կողմի պարտության մեջ»:

Նաեւ հավելում է. «Զավեշտական է, որ ներկայիս Հայաստանի կառավարությունը նույնպես փորձում է մերձենալ Իսրայելի հետ՝ անվտանգության հարցերում: Այնուամենայնիվ, Երուսաղեմը շարունակում է չափազանց զգույշ լինել՝ կարեւորելով Ադրբեջանի հետ իր ռազմավարական գործընկերությունը»:

Արա ԱԼՈՅԱՆ

ԱՐԱՍՈՒՄ ԵՆ

ԵԹԵ 2023-ԻՆ ՈՒՐԻՇՆ ԸՆՏՐՎԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ, ԱՐՑԱԽԸ ՉԷՐ ՀԱՅԱԹԱՓՎԻ

Որքան մոտենում են ընտրությունները, այնքան ավելի ջղաձիգ է դառնում Նիկոլ Փաշինյանը: Կառավարության վերջին նիստից հետո, ճեպազրույցի ժամանակ նա ՀՀ քաղաքացիներին ուղղակի սպառնաց նոր պատերազմով: Կամ ես, կամ պատերազմ. այս մտքին Փաշինյանը վերադառնում է պարբերաբար: Վերջին ձեւակերպումներն ամենակտրուկն էին: Ընդդիմադիրներին նա անվանեց «պատերազմի կուսակցություն», «խաղաղության ռեւիզիայի դիրքերից հանդես եկող ուժեր», որոնք պատրաստվում են նոր սեպտեմբերյան պատերազմի՝ «ծանր հետեւանքներով»: Այնքան միանշանակ էր նախազգուշացումը, որ հանրության կողմից ընկալվեց որպես սպառնալիք եւ Ադրբեջանի ղեկավարին ուղղված SOS ազդանշան՝ ՔՊ-ի ճոճվող ավտոբուսից: «Արդեն Ալիեւը մեզ չի սպառնում պատերազմով, դա անում է Փաշինյանը»,- արձագանքում է դաշնակցական պատգամավոր Քրիստինե Վարդանյանը:

«Էս ասում եք՝ եթե ինձ չընտրեք վարչապետ, Ադրբեջանից ինձ պադդերժկա կանեն ու կհարձակվեն Հայաստանի վրա: Էս մարդ եք բերում մեզ վրա»,- հարցնում է «Միասնության թեւեր» շարժման համակարգող Արման Թաթոյանը: Շատ հավանական է, որ նման հայտարարություններով Փաշինյանն «իշմար է տալիս» Ալիեւին, որ օգնի իրեն: Իրականում, Նիկոլի ընտրվելն ամենեւին էլ երաշխիք չէ պատերազմներից խուսափելու, եթե չասենք՝ ճիշտ հակառակը, նպաստող գործոն է: Հիշեցնենք. 2023 թվականի սեպտեմբերի 17-ին Երեւանում անցկացվեցին ավագանու ընտրություններ, եւ ՔՊ-ն մի կերպ իշխանություն ձեւավորեց, իսկ ընտրությունից ընդամենը 2 օր անց՝ սեպտեմբերի 19-ին, Ադրբեջանը լայնածավալ ռազմական գործողություն սկսեց Արցախի դեմ, որն ավարտվեց վերջինիս տոտալ հայաթափմամբ: Այս ժամանակագրությունը մինչ օրս հարցեր է առաջացնում՝ արդյո՞ք պատահականություն էր, եւ որքանո՞վ է ՀՀ անվտանգությունը փոխկապակցված ներքաղաքական գործընթացների հետ: Հարցերն ուղղեցինք Գառնիկ Իսագուլյանին եւ Մովսես Հակոբյանին:

«Ազգային անվտանգություն» կուսակցության նախագահ, Հայաստանում Արցախի նախկին ներկայացուցիչ **Գառնիկ Իսագուլյանը** կարծում է, որ Ադրբեջանի գործողություններն ու մեր ներքաղաքական իրավիճակն ուղղակի եւ անմիջական փոխկապակցված են: «Մենք ճրբ ունեցանք հաջողություններ Արցախի հարցում: Երբ որ Ադրբեջանում իշխանության եկավ Էլչիբեյը: Այսինքն՝ եթե երկրի ղեկավարը թույլ է ու վախկոտ, բնականաբար, այդ երկրի գլխին դոմոկլյան սուր է կախված լինում, իսկ եթե ուժեղ մարդ է գալիս, բնականաբար, ամեն ինչ սկսում է շարժվել»,- ասաց նա:

Բանակում ծառայության տարիները հիշեց, որ ուժեղ էին հայերը, չեչենները, որոնք մյուսներից տարբերվում էին իրենց համարձակությամբ ու խիզախությամբ: «Կարող էր ամբողջ 700 հոգանոց պոլկում լիներ մեկ չեչեն, եւ մյուսներն իրենից շան պես վախենային, որովհետեւ առաջին օրերին, երբ որ նրան փորձում էին նվաստացնել, ստորացնել, նա չէր տրվում դրան: Կապ չունի, դուք նրան կարող էիք ծեծել, բայց մեկ-երկու՝ արդեն վախենում էին, որովհետեւ գիտեին, որ պատասխանը տալու է: Կային ղազախներ, ուզբեկներ, որոնց երկու տարի շարունակ աշխատեցնում էին, որովհետեւ նրանք վախկոտ էին: Չեչենը կարող էր նրանց շարել ու չափալախելով գալ, վրաները, որպես տանձիկ, պարապել: Բնականաբար, երկրի ղեկավարի հզորությունը, ուժն ու կամքը շատ մեծ նշանակություն ունեն»: Ադրբեջանն ուղիղ օգնում է Փաշինյանին, նրանց մեջ կամ պայմանավորվածություն: «Այո, բայց պետք է իմանալ, որ անմիջապես իշխանափոխությունից հետո որեւէ բան, սովորաբար, տեղի չի ունենում, որոշակի շրջան պետք է անցնի: Նիկոլը եկավ իշխանության, 2 տարի նրանք սպասեցին՝ նոր պատերազմ եղավ: Բոլոր գերտերությունները, հարեւան պետություններն ուզում են իմանալ, թե ով է իշխանության եկածը: Կարող է նորի դեմ պատերազմ սկսեն, ու, կոպիտ ասած, մի ատոմային ռումբ ընկնի գլխներին: Եթե ինչ-որ մեկը գալիս է իշխանության, հաստատ, 2 տարի ոչինչ չի լինում, բացառված է, որ անմիջապես ընտրություններից հետո որեւէ բան տեղի ունենա: Կախված այդ նոր մարդու պահվածքից՝ 1-2 տարի հետո պետությունները նոր որոշում են, թե նրա հետ ոնց հարաբերվել: Հիմա եթե Հայաստանում մնա Նիկոլը, իրենք գիտեն, որ ինչ ուզեն՝ անելու է, չի կարող չանել: Այդ պատերազմը մնալու է կախված մեր ժողովրդի գլխին: Նա, քանի որ ժողովրդին անընդհատ սպանել է, վախեցնում է պատերազմով, որ ժողովուրդը չգնա փոփոխություններին»: Իսկ 2023 թ. սեպտեմբերի 17-ի քաղաքապետի ընտրությունները կապ ունե՞ն երկու օր հետո Արցախում սկսված պատերազմի հետ: «Եթե հիշում եք՝ այն ժամանակ, նախընտրական քարոզչության ընթացքում իրենք ասում էին՝ եթե որեւէ մեկն ընտրվի, ո՛չ մենք, պատերազմ է լինելու: Իրենք ընտրվեցին, ու նոր պատերազմ եղավ, որովհետեւ եթե ուրիշն ընտրվեր Երեւանի քաղաքապետ, պատերազմ չէր լինելու, հայաթափում չէր լինելու»: Այսինքն, կարծում եք՝ հիմա ի՞լ նույնը կլինի, եթե իրենք ընտրվեն, պատերազմ կլինի: «Միանշանակ»:

ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ, գեներալ-գնդապետ **Մովսես Հակոբյանն** ասել է ու էլի կրկնում է. «Նիկոլ Փաշինյանն իսկական հայ ժողովրդի, Հայաստանի Հանրապետության ժողովրդի վարչապետն է: Ես սա ասելու համար ենթարկվել եմ քննադատության, կարծում եմ՝ Ձեր հարցին պատասխանեցի, եւ էլի կքննադատվեմ»:

- Այսինքն, ժողովուրդն արժանի՞ է Նիկոլին, այդպե՞ս հասկանանք:

- Ոչ, Նիկոլ Փաշինյանը վարում է այն քաղաքականությունը, ինչ որ ցանկանում է ժողովուրդը:

- Բայց հակառակն է դուրս գալիս: Նա ասում է՝ ինձ ընտրեք, որ պատերազմ չլինի, բայց հենց իրեն ընտրում ենք, պատերազմ է լինում՝ Հայաստանում, Արցախում:

- Դուք չե՞ք ուզում համաձայնել, որ Նիկոլ Փաշինյանը շատ ուժեղ քաղաքական գործիչ է:

- Ոչ, թույլ է եւ խորամանկ, ես կասեի:

- Բոլոր քաղաքական գործիչները խորամանկ են, քաղաքականությունը խորամանկություն է: Երբ որ ինձ հարց են տվել 15 թվականին՝ ես քաղաքականությամբ կզբաղվեի, թե չէ, ասել եմ՝ ոչ, որովհետեւ ես զինվորական եմ: Զինվորականը երբ մի միտք է արտահայտում, 1000 մարդ եթե լսում է, պետք է ընկալեն նույն ձեւով: Քաղաքական գործիչը երբ որ միտք է արտահայտում, եւ 1000 մարդ լսում է, նրանք այդ միտքը կհասկանան 1000 ձեւի:

- Լավ, որպես զինվորական, որը շատ լավ է ճանաչում ադրբեջանցիներին, ի՞նչ եք կարծում. եթե Փաշինյանին չընտրենք, սեպտեմբերին պատերա՞զմ կսկսվի, ինչպես ինքն է սպառնում:

- Ես կարծում եմ, որ գլխավոր գործոնը՝ պատերազմ սկսվելու հարցում, հայ ժողովուրդն է: Եթե նա ուզի կռիվ լինի, կլինի, եթե չուզի, չի լինի: Կռիվ չլինելու միակ երաշխիքը դիմակայելու պատրաստակամությունն է: Եթե դու պատրաստ չես դիմակայելու, ով ուզում է ընտրվի, պատերազմը լինելու է:

- Բայց դա կապված չէ՞ բանակի մարտունակության հետ, պատրա՞ստ ենք պատերազմի, թե՞ ոչ:

- Դրանք՝ բոլորը, երկրորդական են, դա մարդու մտքից ու կամքից է կախված, որ նա չուզենա պարտվել, մնացած բոլորը հայթայթվող է, ստացվող է:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԿԱ՛Մ ԻՆՁ ԸՆՏՐԵՔ, ԿԱ՛Մ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ ԿՊԱՏՎԻՐԵՄ ՁԵՐ ԴԵՄ

Իր իշխանության 8 տարվա ընթացքում մի քանի անգամ պատերազմ ու ռազմական գործողություններ բերած Նիկոլ Փաշինյանը նախօրեին սպառնաց ժողովրդին՝ եթե ինձ չընտրեք, սեպտեմբերին մեծ պատերազմ կլինի: 2018-ին էլ ասում էր՝ կամ ես կլինեմ ՀՀ վարչապետ, կամ Հայաստանը վարչապետ չի ունենա: Չնայած որեւէ փաստարկ չնշեց, թե ինչու է պատերազմ կանխատեսում, միայն ասաց, թե ընդդիմադիր ուժերը «հանդես են գալիս խաղաղության ռեւիզիայի դիրքերից, ինչը նշանակում է անխուսափելի պատերազմ», կարելի է կարծել, որ պայմանավորվել է Ալիեւի հետ:

Ստացվում է՝ մի կողմից շուրջօրյա ռեժիմով այլոց մեղադրում են հիբրիդային պատերազմ մղելու համար, թե իբր ստահոդ լուրեր են տարածում՝ առանց փաստական տվյալների, ժողովրդի մեջ խուճապ սերմանելու համար, մյուս կողմից՝ իրենք են դարձել հիբրիդային պատերազմի հրձիգներ: Երեկ ԱԺ ժամանած ուժային բլոկի պաշտոնյաները փորձում էին Փաշինյանի գցած քարը հանել փոսից՝ խմբագրել նրա ասածները: ՆԳ նախարար **Արփինե Սարգսյանը** բաց տեքստով հայտարարեց, որ չկան փաստական տվյալներ, որ Հայաստանում որեւէ քաղաքական ուժ պատերազմի նախապատրաստություն է տեսնում, այլ կերպ ասած՝ Փաշինյանը ստում է: «Վարչապետը փաստական առումով անդրադառնում է այն խոսույթին, որը կա այս պահի դրությամբ քաղաքական դաշտում, եւ քաղաքական արձագանք է տալիս, որպես երկրի ղեկավար: Եթե այլ հանցագործության տարրերի հետ կապված հարցեր առաջանան, բնականաբար, ՆԳՆ-ն հանդես կգա հաղորդագրությամբ... իրավապահ համակարգը հանցագործության կոնկրետ տարրերի դեպքում կտա իրավական գնահատական»,- ասաց նա: Արտաքին հետախուզության ծառայության պետ **Քրիստինե Գրիգորյանը** հարցին, թե աշնանն ինչ պատերազմ է կանխատեսում Փաշինյանը, կամ նման վտանգ, չպատասխանեց. «Վարչապետի խոսքը պետք չէ խեղաթյուրել»:

Պաշտպանության նախարար **Սուրեն Պապիկյանը** փորձեց չհերքել Փաշինյանին. «Հստակ է, որ ընդդիմության հիմնական հատվածի հայտարարությունները նրա մասին են, որ ունեն տարածքային պահանջներ հարեւան երկրներից, իսկ դա ենթադրում է ուղիղ պատերազմ, այսինքն՝ նոր բան այստեղ ասելու կարիք չկա»: Ո՞վ է տարածքային պահանջ ներկայացրել հարեւան երկրների նկատմամբ: «Բա եթե ՔՊ վարչության նախագահը, ՀՀ վարչապետն ասում է՝ ես ղեկավարում եմ շարժում, որը չի շարունակելու ղարաբաղյան շարժումը, իսկ գրեթե բոլորն ասում են, որ պետք է շարժումը շարունակվի, դրանք քաղաքական գնահատականներ չեն, քաղաքական գնահատականները պիտի լինեն պատասխանատու... Ակնհայտ է, որ նրանց ռազմատենչ կեցվածքը բերելու է պատերազմի, նոր բան չեմ ասում»:

Պատգամավոր **Քրիստինե Վարդանյանն** արձանագրում է, որ Փաշինյանն առաջին ղեկավարն է, որը հայ հանրությանը պատերազմով շանտաժի է ենթարկում, դա այլեւս Ադրբեջանի նախագահը չի անում, այլ՝ ՀՀ վարչապետը. «Սիրելի քաղաքացիներ, ինքներդ մտածեք՝ կամ Հայաստանում այնպիսի քաղաքական ուժ, որը պայքարում է, որ գա իշխանության, եւ կուզենա, որ իր օրոք պատերազմ լինի...»: Փաշինյանն ասում է՝ ոչ միայն պատերազմ է լինելու, այլեւ ԹՐԻՓՓ չի լինելու, ԵՄ-ն հեռանալու է Հայաստանից, փաստորեն՝ այդ կառույցներն աշխատում են ոչ թե պետության, այլ կոնկրետ քաղաքական ուժի հետ, Վարդանյանը հեգնանքով ասաց. «Իսկ արեւը ծագելո՞ւ է արեւելքից, մայր մտնելո՞ւ է արեւմուտքում: Սեւանը փայլփլելո՞ւ է, թե՞ այլեւս ցամաքելու: Երեխաները ծիծաղելո՞ւ են երբեւէ՝ Փաշինյանից հետո, թե՞ ծիծաղը կտրվելու է: Ես հասկանում եմ, որ ՔՊ-ի համար կյանքը վերջանում է Փաշինյանով, բայց հայ ժողովրդի կյանքը ո՞չ սկսվել է Փաշինյանով, ո՞չ ավարտվում է»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՂԱԶԱԽԱԿԱՆ ՑՈՐԵՆԸ ԵՎ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՆՅՈՎՐԸ

Նախորդ՝ «Պապոյանի ստախոսությունը, ՀՀ դատախազությունը, Բաքվի ցորենի տերմինալը» հոդվածում արդեն ասվել է, որ դեկտեմբերի կեսերին գրավոր հաղորդում էինք ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն (լուսապատճենը՝ հոդվածին կից, կայքում հրապարակել ենք): Հաղորդման մեջ մասնավորապես ասված է. «Տիկ. գլխավոր դատախազ, դիմելով Ձեզ՝ խնդրում եմ, որպեսզի նախաձեռնվի հանրային քրեական վարույթ, եւ պարզվի, թե ով է Ա. Շատվորյանը, ինչ լիազորությամբ է նա բանակցել, եւ ինչ պայմանագիր է կնքվել, որ հնարավոր է դարձել Ղազախստանից հասկի մեջ ծլարձակած, միկո, ալֆա, այլ տոքսիններով վարակի ենթակա, IV կարգի կերարտադրության ցորենի ներմուծումը Հայաստան, որը ՀՀ իշխանությունները տարփողել են որպես սննդամթերք՝ հասարակության առողջության համար ստեղծելով անթույլատրելի վտանգներ: Ո՞րն է ՀՀ իշխանությունների ներգրավվածության եւ պատասխանատվության չափը Ղազախստանից կերարտադրության ցորեն ներկրելու եւ հասարակությանը որպես սննդամթերք մատուցելու կեղծարարությունում»:

Նաեւ տեղեկացրել էինք, որ, դատելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության մի պատասխանից, գոյություն ունեն Ղազախստանից ներմուծված ցորենի՝ ղազախստանյան եւ հայաստանյան լաբորատորիաների հետազոտությունների արդյունքներ, սակայն որեւէ օբյեկտիվ, թվային տվյալ այդ հետազոտություններից չի հրապարակվել: Թվային տվյալներ հրապարակել է միայն Ղազախստանի Продкорпорация-ն, որոնց համաձայն՝ նույնիսկ երբ IV կարգի, կերարտադրության համար պիտանի ցորենն արհեստականորեն բարելավված ցուցանիշներով առաքվել է Հայաստան (իսկ բարելավումը, գաղտնիք չէ, ժամանակավոր է եւ կատարվում է քիմիական հավելումներով), դարձյալ սնձանի՝ gluten-ի այնպիսի ցուցանիշ է արձանագրվել՝ 20%, որը թույլատրելի չէ սննդի արդյունաբերության մեջ:

Նույնպես տեղեկացրել էինք, որ Ղազախստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ համաձայնություն է ձեռք բերվել՝ Բաքվի Գովսան նավահանգստում գտնվող ցորենի պահեստարանն ընդլայնելու եւ համատեղ ղազախա-ադրբեջանական վերահսկողությամբ տերմինալի վերածելու մասին, ինչը նշանակում է, եւ բաց տեքստով էլ ասված է, որ ապագայում Ղազախստանից ներկրվող ցորենը ոչ թե տրանզիտ անցնելու է Ադրբեջանի տարածքով, այլ մատակարարվելու է բուն Բաքվից՝ դրանից արտածվող վտանգներով: Ի տես մտահոգիչ հանգամանքների՝ ՀՀ գլխավոր դատախազին խնդրել էինք հարուցել քրեական վարույթ եւ պարզել Ղազախստանից ցորենի ներմուծման պայմաններն ու հանգամանքները, որպեսզի կանխվեն Հայաստանի ժողովրդի առողջության համար ստեղծվող սպառնալիքները, որ բաց աղբյուրներից հասանելի տեղեկատվությամբ ակնհայտ են:

Հաղորդումը Գլխավոր դատախազություն ներկայացնելուց հետո, հաջորդ օրը հաստատեցին, որ գրությունը 18.12.2025թ. ամսաթվով մուտքագրվել է, պատասխանի պետք է սպասել 5-30 օրվա ընթացքում: 2026-ի հունվարի վերջին Գլխավոր դատախազությունից դեռ արձագանք չկար: Բնականաբար, զանգեցի դատախազություն: Այնտեղից հայտնեցին, որ իմ դիմումն ուղարկվել է ՆԳՆ, որից հետո ստորեւ մեջբերվող կարճ խնդրանքն եմ ուղարկել Գլխավոր դատախազություն:

«Fri, Jan 30, 3:14 PM
ՀՀ գլխավոր դատախազություն
Դատախազության հարգելի աշխատակիցներ,
Թույլ տվեք Ձեզ անհանգստացնել ավելի վաղ՝ 18.12.2025թ.-ին ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրված իմ հաղորդման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով: Իմ նշյալ հաղորդումը (վերաբերում էր Ղազախստանից ներմուծված ցորենին) եւ կից փաստաթղթերը ստորեւ կցված են: Ինձ դատախազությունից ասվել էր, որ դիմումի մուտքագրումից հետո պատասխան պետք է սպասել 5-ից մինչեւ 30-օրյա ժամկետում: Նշյալ ժամկետում ես որեւէ տեղեկություն՝ իմ դիմումի ընթացքի վերաբերյալ, չեմ ստացել: 30-օրյա ժամկետի լրանալուց հետո բանավոր, հեռախոսազանգով պարզել եմ, որ Գլխավոր դատախազությունից 07.01.2026թ.-ին իմ դիմումին առնչվող գրությունն է ուղարկվել ՆԳՆ Քրեական ոստիկանություն, սակայն դարձյալ որեւէ մանրամասնության չեմ տեղեկացել:

Այժմ գրավոր դիմում եւ խնդրում եմ՝ տեղեկատվության տրամադրման համար ընդունված 5-օրյա ժամկետում ինձ տրամադրել հակիրճ տեղեկատվություն Գլխավոր դատախազությունում 18.12.2025թ.-ի իմ հաղորդմանը տրված ընթացքի եւ գործողությունների ներկա փուլի մասին:

Շնորհակալություն:
Հարգանքով՝ Լուսինե Պետրոսյան»:

Փետրվարի կեսերին, ի պատասխան իմ՝ տեղեկատվություն տրամադրելու խնդրանքի, դատախազությունից ստացվում է պատասխան, որը մեջբերում եմ ստորեւ (լուսապատճենը կիրապարակվի կայքում՝ ներկա հոդվածին կից):

«16.02.2026թ. Լ. Պետրոսյանին
Ի պատասխան 31.01.2026թ. ՀՀ գլխավոր դատախազություն հասցեագրված գրության, հայտնում եմ, որ Ձեր՝ 18.12.2025թ. ՀՀ գլխավոր դատախազություն հասցեագրված գրությունը եւ նյութերը ստուգողական գործողություններ կատարելու նպատակով ուղարկվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ վարչություն: ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ վարչությունից ստացված գրության համաձայն՝ իրականացված ստուգողական գործողությունների արդյունքում ձեռք չեն բերվել այնպիսի փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին «Բաղրամյան» ՍՊ ընկերության տնօրինության կամ այլ ֆիզիկական, իրավաբանական ու պաշտոնատար անձանց կողմից առերեւույթ որեւէ հանցանք կատարած լինելու փաստ, ավելին՝ իրականացված լաբորատոր փորձարկումների արդյունքում պարզվել է, որ «Բաղրամյան» ՍՊ ընկերության կողմից ներմուծված ցորենը համապատասխանել է պարենային մթերքին ներկայացվող չափանիշներին եւ ենթակա է եղել օգտագործման պարենային մթերքների արտադրության մեջ, ուստի կատարված ուսումնասիրության նյութերը թողնվել են անհետեւանք եւ կցվել անվանացուցակային գործին:

Հարգանքով՝ Հ. Թորոսյան
Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ»:

Պատասխանից ընդհանուր առմամբ հասկանալի էր, որ ոչինչ կոնկրետ եւ օբյեկտիվ չեն պատրաստվում ասել եւ քրեական վարույթ էլ կարծես թե չեն պատրաստվում հարուցել: Այդուհանդերձ, չենթադրելու եւ էական մի քանի մանրամասներ էլ ճշտելու համար, երկու օր անց նորից տեղեկատվության տրամադրման խնդրանքով դիմում եմ դատախազություն:

«Thu, Feb 19, 4:13 PM
ՀՀ գլխավոր դատախազություն
Դատախազության հարգելի աշխատակիցներ,
Սույն թվականի փետրվարի 16-ին ես ստացել եմ ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Հ. Թորոսյանի ստորագրությամբ գրությունը՝ ի պատասխան իմ 30.01.2026թ. (մուտքագրված՝ 31.01.2026) դիմումի, ինչի համար հայտնում եմ շնորհակալություն:

Սակայն մինչեւ հրապարակային, մամուլով իմ՝ 18.12.2025թ.-ին Գլխավոր դատախազություն ներկայացրած հաղորդմանը եւ հետագա ընթացքին անդրադառնալը, խնդրում եմ երեք հարցի հստակեցում.

1. Ես կարո՞ղ եմ արդյոք ծանոթանալ իմ՝ հաղորդման հիման վրա ՆԳՆ Քրեական ոստիկանությունում կատարված ուսումնասիրության նյութերին, որոնք թողնվել են անհետեւանք եւ կցվել են անվանացուցակային գործին՝ այդ նյութերից հրապարակային մեջբերումներ կատարելու համար կամ լոկ իմ տեղեկանալու պայմանով:

2. Արդյո՞ք դատախազ Հ. Թորոսյանի գրությունում հիշատակված լաբորատոր փորձաքննությունների արդյունքները ներառված են դատախազությունում կազմված գործի նյութերում, եթե այո, ապա ես կարո՞ղ եմ դրանց ծանոթանալ:

3. Ինչպե՞ս է պատահել, որ իմ հաղորդման հիման վրա ուսումնասիրություններ են կատարվել տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հարթությունում, սակայն ոչ՝ հանրային առողջության դեմ ուղղված հանցագործությունների: Իմ հաղորդման հետ կապված ուսումնասիրությունները դատախազությունում ավարտվա՞ծ են արդյոք, թե՞ դեռ ոչ:

Խնդրում եմ պատասխանը տրամադրել տեղեկատվության տրամադրման համար ընդունված 5-օրյա ժամկետում:

Շնորհակալություն:
Հարգանքով՝ Լուսինե Պետրոսյան»

Եվս կես ամիս անց նոր պատասխան է ստացվում, նույն դատախազի ստորագրությամբ (մեջբերում եմ ստորեւ, լուսապատճենը կիրապարակվի կայքում), որով կրկնում են նախկինում ասվածը, մերժում են գործում առկա նյութերին ծանոթանալու եւ ամենաէականը՝ իբր թե գոյություն ունեցող լաբորատոր հետազոտությունների արդյունքները տեսնելու խնդրանքները:

«02.03.2026թ. Լ. Պետրոսյանին
Ի պատասխան 20.02.2026թ. ՀՀ գլխավոր դատախազություն հասցեագրված գրության, հայտնում եմ, որ Ձեր՝ 18.12.2025թ. դիմումի եւ կից փաստաթղթերի կապակցությամբ դեռեւս սույն թվականի փետրվարի 16-ին հայտնվել էր, որ նյութերն ուղարկվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն՝ համապատասխան ստուգողական գործողություններ իրականացնելու նպատակով: ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ վարչությունից ստացված գրության համաձայն՝ իրականացված ստուգողական գործողությունների արդյունքում ձեռք չեն բերվել այնպիսի փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին «Բաղրամյան» ՍՊ ընկերության տնօրինության կամ այլ ֆիզիկական, իրավաբանական ու պաշտոնատար անձանց կողմից առերեւույթ որեւէ հանցանք կատարած լինելու փաստ, ավելին՝ իրականացված լաբորատոր փորձարկումների արդյունքում պարզվել է, որ «Բաղրամյան» ՍՊ ընկերության կողմից ներմուծված ցորենը համապատասխանել է պարենային մթերքին ներկայացվող չափանիշներին եւ ենթակա է եղել օգտագործման պարենային մթերքների արտադրության մեջ, ուստի կատարված ուսումնասիրության նյութերը թողնվել են անհետեւանք եւ կցվել անվանացուցակային գործին:

Ինչ վերաբերում է ստուգողական գործողությունների արդյունքների տրամադրմանը, ապա հայտնում եմ, որ գործող ընթացակարգերով հիշյալ նյութերի տրամադրման կարգ դիմումատուին նախատեսված չէ:

Հարգանքով՝ Հ. Թորոսյան
Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ»:

Ամենքս գիտակցում ենք, որ դատախազության պատասխանում որեւէ կերպ չնշելը, չկոնկրետացնելը, թե «Բաղրամյան» ՍՊԸ-ի կողմից երբ, որ երկրից ներմուծված, ինչ խմբաքանակի ցորենի մասին է խոսքը, grand manoeuvre է (մեծ մանյովր): Եթե 2025-ի նոյեմբերին Ղազախստանից ներկրված ցորենի խմբաքանակի հետ խնդիրներ չլինեին, կխոսեին այդ խմբաքանակի մասին, ոչ թե՝ առհասարակ «Բաղրամյան» ՍՊԸ-ի ցորենի ներմուծումների, լաբորատոր փորձաքննության արդյունքներ չէին թաքցնի եւ, վերջապես, հանրային առողջությանը սպառնացող վտանգի կտրվածքով մեր հաղորդումը կուսումնասիրեին, ոչ թե տնտեսական գործունեության դեմ հանցագործության: Նշված քայլերից ոչ մեկը չի արվել: Ինչ է այս ամենը նշանակում, եւ ինչ հնարավորություն կա հասարակության կողմից իրավական քայլ կատարելու՝ հաջորդիվ:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ԱԿՈՒԱԳԻԾ

ԿԱՐՈՂ Է 102-ՐԴ ՌԱԶՄԱԲԱԶԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

Ռուսաստանի Դաշնության կառավարությունը Պետդումա է ներկայացրել օրինագիծ, որը նախագահին լիազորություն է տալիս՝ զինված ուժերն օգտագործելու արտասահմանում՝ պաշտպանելու օտարերկրյա դատարանների կամ միջազգային մարմինների որոշումներով ձերբակալված կամ հետապնդվող Ռուսաստանի քաղաքացիներին, որոնց իրավասությունը հիմնված չէ Ռուսաստանի Դաշնության հետ կնքված պայմանագրերի կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւերի վրա: Այս փաստաթուղթը փոփոխություններ է մտցնում «Քաղաքացիության մասին» եւ «Պաշտպանության մասին» օրենքներում. նախագահի որոշմամբ, պետական մարմինները պարտավորվում են միջոցներ ձեռնարկել նման քաղաքացիներին պաշտպանելու համար, իսկ բանակի օգտագործումն ընդլայնվում է՝ ներառելով նրանց ազատ արձակման հետ կապված խնդիրները: Պետդումա ուղարկված նախագծի բացատրական գրառման մեջ նշվում է, որ նախաձեռնությունն ընդլայնում է «Անվտանգության մասին» օրենքի դրույթները՝ ավելացնելով հատուկ գործիք՝ զինված ուժերի արտատարածքային օգտագործումը՝ Ռուսաստանի եւ նրա քաղաքացիների շահերը պաշտպանելու համար:

Նման նախագծի փոփոխության անհրաժեշտությունն առաջացավ, երբ տարբեր երկրներ սկսեցին կալանավորել Ռուսաստանի Դաշնության դրոշի տակ նավարկող նավեր, որոնց անձնակազմերը համալրված էին Ռուսաստանի քաղաքացիներով: Վերջին շրջանում Բալթիկ ծովի ջրերում եւ այլ տարածքներում նման իրավիճակները դարձել են հաճախակի, եւ նման օրենք ընդունելով, Ռուսաստանը ցանկանում է զգուշացնել իր դեմ թշնամական գործողություններ իրականացրած երկրներին, որ եթե նման դեպքերը շարունակվեն, ապա Ռուսաստանը պատրաստ կլինի զինված ուժեր կիրառել՝ իր երկրի եւ քաղաքացիների օրինական շահերը պաշտպանելու համար:

Օրինակ, եթե Լիտվայի, Նորվեգիայի, Դանիայի կամ որեւէ այլ երկրի մտքով անցնի կալանավորել ռուսական նավթով բարձված լցանավ եւ ազատությունից զրկել նավի վրա գտնվող Ռուսաստանի քաղաքացիություն ունեցող անձնակազմի անդամներին, ապա Ռուսաստանը կարող է այդ երկրները, դրանց ենթակառուցվածքները, պետական եւ կառավարական հիմնարկները ենթարկել հրթիռային հարվածների կամ նման հարվածներ չհասցնելու դիմաց պահանջել ազատ արձակել իրեն պատկանող նավը եւ անձնակազմը:

Միջազգային իրավունք այլեւս գոյություն չունի, վիճելի հարցերն այլեւս չեն լուծվում միջազգային հարթակներում, եւ երկրներից յուրաքանչյուրը փորձում է իր ունեցած միջոցներով եւ հնարավորություններով պաշտպանել իր աշխարհաքաղաքական եւ տնտեսական շահերը, այդ թվում՝ իր քաղաքացիների իրավունքները եւ ազատությունները: Մանավանդ, որ կյանքը ցույց տվեց, որ Հյուսիսատլանտյան դաշինքը եւս անգործունակ է, եւ այդ դաշինքի հիմնական անդամ երկիրն այնքան էլ շահագրգռված չէ պաշտպանել դաշինքի անդամ մանր երկրների շահերը, եթե նրանք պատրաստ չեն ԱՄՆ-ի հրահանգով նետվել Մերձավոր Արեւելքում ԱՄՆ-ի կողմից վառված կրակի բոցերի մեջ:

Մեզ այս օրենքի հետ կապված՝ հետաքրքրում է մեզ վերաբերող հատվածը: Գաղտնիք չէ, որ Հայաստանում արդեն 9 ամիս կալանավորված եւ ազատությունից զրկված Սամվել Կարապետյանը, բացի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, ունի նաեւ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն: Սամվել Կարապետյանի կալանավորման որոշումը կայացրած դատարանների իրավասությունը հիմնված չէ Ռուսաստանի Դաշնության հետ կնքված պայմանագրերի կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւերի վրա. ՄԱԿ ԱԽ-ն Սամվել Կարապետյանին կալանավորելու սանկցիա չի տվել: Բացի դա, Ռուսաստանի բազմաթիվ պաշտոնական ներկայացուցիչներ հայտարարել են, որ Կարապետյանի կալանավորումը համարում են ոչ իրավաչափ, նրան տրամադրվել է հյուպատոսական աջակցություն:

Հիմա հարց. այս նախագծի ընդունումից հետո Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը կարո՞ղ է օգտագործել իր լիազորությունը եւ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերն օգտագործել՝ իր քաղաքացի Սամվել Կարապետյանին պաշտպանելու համար: Տեսականորեն, իհարկե, կարող է: Գործնականում կտա, թե չի տա, դժվար է ասել: Բայց հարցին պատասխանելիս պետք է հաշվի առնել, որ Հայաստանի տարածքում օրինական հիմքով գտնվում են ՌԴ զինված ուժերի ստորաբաժանումներ՝102-րդ ռազմաբազան: Ռազմաբազայում գտնվող հատուկ նշանակության ուժերը հրաման ստանալու դեպքում կարող են հատուկ գործողություն իրականացնել՝ ի պաշտպանություն Սամվել Կարապետյանի:

Իհարկե, Հայաստանը եւս ունի զինված ուժեր, այդ զինված ուժերի կազմում եւս կան հատուկ նշանակության ուժեր, որոնք կարող են հակազդել Ռուսաստանի զինված ուժերին: Բայց այդ դեպքում մենք ականատես կլինենք մի աննախադեպ իրավիճակի՝ հայ-ռուսական ռազմական բախման, որն աննախադեպ կլինի հայ ժողովրդի պատմության մեջ, իսկ մյուս կողմից կպայթի Փաշինյանի փչած խաղաղության փուչիկը:

Սա այնքան էլ տեսական իրավիճակ չէ, երբ մեծ երկրներն ինչ-որ օրենքներ են ընդունում, դրանց հետեւում կան որոշակի գործողությունների պլանավորում եւ նախապատրաստություն: Այնպես որ, ոչինչ բացառել պետք չէ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՉԳՈՒՇԱՑԵՔ ՆՈՐԱՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Դեռ չպարզած՝ ով բերեց այս թյուրիմացությանը, արդեն փնտրում ենք Սամվել Կարապետյանին բերողին… Չգիտեմ, էլի, մենք բո՞ւթ ենք, թե՞ անհույս մի ամբոխ, որ վերջնականապես կորցրել է վտանգի զգացողությունը: Զրաղացը կորցրել՝ չախչախն ենք ման գալիս՝ մոռացած 8 տարվա ողջ խայտառակությունը: Արցախը կորցրել՝ արդեն Հայաստանն ենք կորցնում, բայց ուզում ենք իմանալ՝ ո՞վ բերեց Սամվել Կարապետյանին: Ով ուզում է՝ բերած լինի… Դա է հիմա ամենակարեւոր հարցը, թե՞ ՔՊ-ական գարշահոտը հեռացնելը:

Մի անգամ ընկել ենք էս ք.քի մեջ: Փոխանակ պարզեինք՝ ով բերեց 44-օրյա պատերազմն ու խաթարեց մեր կյանքը, ընկել, «Նիկոլ» բերողին էինք փնտրում: Գտա՞նք: Մեզ մի թուղթ ցույց տվեցին, որ, 44-օրյա պատերազմի մեկ տարին չլրացած, 680 հազար ոչխար ձայն է տվել քաղպուտանկա ՔՊ-ին: Դրա հետեւանքը ՀՀ սուվերեն տարածքների եւ Արցախի կորուստը եղավ: Դե գնացեք ու ինչքան ուզում եք՝ պարզեք, թե ով բերեց այս թյուրիմացությանը: Եվ հիմա, մինչ մենք ուզում ենք պարզել, թե ով բերեց Սամվել Կարապետյանին, թյուրիմացությունը կարող է վերարտադրվել՝ դրանից բխող ամենատխուր հետեւանքներով՝ Սյունիքի կորուստ, սահմանադրության չեղարկում, եւ՝ մնաս բարով, անկախություն: Սա՞ եք ուզում: Կարծում եմ՝ ոչ: Ավելի ճիշտ՝ չեմ կարծում, որ մենք այդ աստիճանի ախմախ ենք: Դե ուրեմն, վերջ տանք անիմաստ փնտրտուքին ու լրջացած գնանք ընտրությունների:

Իմ նախորդ հոդվածներից մեկն ավարտել էի հետեւյալ տողերով. «Իշխանությանն էինք ասում «դուռդոմ», մինչդեռ, հարգելի ընդդիմություն, անհրաժեշտություն է առաջացել ընդդիմության դաշտը վերանայելու»: Ընդդիմություն ասելով՝ նկատի չունեմ ՔՊ-ի սպասարկու «ընդդիմադիրներին»: Այստեղ վերանայելու բան էլ չկա… Արման Բաբաջանյանի, Արամ Սարգսյանի, Լեւոն Շիրինյանի, Ստյոպիկ Սաֆարյանի, առհասարակ՝ քաղաքական սբրոդի ի՞նչը վերանայես: Ընդդիմություն ասելով՝ ես հասկանում եմ «Հայաստան» դաշինքը, «Ուժեղ Հայաստանը», «Բարգավաճ Հայաստանը» եւ էլի մեկը, որ, կարծում եմ, առաջիկա օրերին կհայտարարի իր մասնակցության ձեւաչափի մասին եւ ծամոնը չի ձգի այնքան, որ նոր խժդժություն ընկնի ընդդիմադիր ուժերի մեջ: Խոսքը ՀՀԿ-ի մասին է:

Իսկ մինչ ՀՀԿ-ն լրջորեն կմտնի «խաղի» մեջ ու կպարզի իշխանափոխության դրոշը, ես մյուս ընդդիմադիրներին, մասնավորապես «Ուժեղ Հայաստանին» եւ «Բարգավաճ Հայաստանին», կառաջարկեի իրենց գրասենյակների մուտքերին պահակներ կարգել: Սովորական «ֆեյսկոնտրոլն» այս դեպքում անզոր է: Այդ սարքն այնպիսի հիշողություն չունի, որ նորմալ մարդկանց տարբերակի «ականներից» ու ըստ այդմ որոշի՝ ներս թողնե՞լ, թե՞ չթողնել: Այսինքն ձեզ, հարգելի ընդդիմադիրներ, լուրջ պահակներ են անհրաժեշտ: Իշխանությունն այնքա՜ն մարդ կարող է գործուղել ձեզ մոտ… շնից շատ: Հասկացանք՝ ազգն եք միավորում, հասարակության պառակտվածությունն եք փորձում վերացնել, բայց բարի եղեք նաեւ հետաքրքրվել նորեկի անցած ճանապարհով, արած գործերով, իշխանական եւ մերձիշխանական շրջանակներում կերած բողկերով: Ձեր կուսակցություններն ու տապաններն ինչո՞ւ եք «օբշի դվոր» դարձրել, որ մի հատ էլ անակնկալի եք գալիս, երբ «նորեկներն» ինչ-որ բաներ են բլթացնում գործընկեր ընդդիմադիր դաշինքի հասցեին: Արդեն քանի՞ դեպք է եղել, որ իրենցից ոչինչ չներկայացնող այդ նորամիացությունները, փոխանակ ծանոթանալու ձեր ծրագրերին, «Հայաստան» դաշինքին ու ԱԺ «Հայաստան» խմբակցությանն են թիրախավորել: Իմաստը… Բավական է «Հայաստան» դաշինքից «հղի» մի երկուսին հետներդ տանեք խորհրդարան եւ… Ծյուծու՝ «Գյումրի-2» սցենարին: Էլ չեմ խոսում այն մասին, որ այսպես շարունակելու դեպքում ընդդիմադիր դաշտը կվերածվի մի պղտոր ջրափոսի, որից ձուկ բռնելու արվեստին միայն իշխանությունն է տիրապետում:

Նորամիացությունների անուններ միտումնավոր չեմ տալիս, որ ավելորդ չգրգռեմ ոչ միայն իշխանություններին, այլեւ այն ընդդիմադիրներին, որոնք դեռ չեն սովորել քաղաքական դաշտում երկու էշի գարի ջոկել իրարից: Այդքան պարզունակ մի եղեք: Դուք ոչ թե պսպղուն անունների կարիք ունեք, այլ՝ ընտրողի, որ ձեզ ձայն է տալու ոչ թե այդ անունների, այլ ձեր ծրագրերի համար:

Եվ ավարտեմ մի փոքրիկ վարժությամբ: Ի՞նչ եք կարծում, ինչի՞ց ծագեց «ով բերեց այս թյուրիմացությանը» հարցը: Մի շատ պարզ բանից, երբ մի շարք «նախկին» երեւելիներ 44-օրյա պատերազմից հետո անգամ մնացին ՔՊ-ի հետ: Մինչդեռ այդ «երեւելիները» խիստ որոշակի «շկոլաների» ներկայացուցիչներ էին: Մամուլում ու սոցցանցերում, ցավոք, այսօր նոր հարցադրում է շրջանառվում՝ «ո՞վ է բերել» կամ «ո՞վ է բերում» Սամվել Կարապետյանին… Ամենայն հարգանքով այս մեծ հայի հանդեպ՝ ստիպված եմ կրկնել՝ մի պառակտեք ընդդիմության նավը, դուք միայնակ ոչինչ անել չեք կարող այս չարիքի դեմ:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՊԱՏԵՐԱԶՄ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՂՄԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ԹԵՐԻ ԵՆ ԵՂԵԼ՝ ԻՐԱՆՆ ԱՖՂԱՆՍՏԱՆ ՉԷ

Իսրայելա-ամերիկյան ռազմական կոնֆլիկտը շարունակվում է, ներգրավվել են նաեւ Սաուդյան Արաբիան, Քաթարը, Բահրեյնը: Միջազգայնագետ, քաղաքական վերլուծաբան **Դավիթ Կարապետյանի** հետ զրուցել ենք պատերազմի թեմայով:

«Ինտենսիվ ռազմական գործողություններին այդ երկրների՝ իրենց զինուժով անմիջական մասնակից լինելը դեռեւս տեղի չի ունեցել մինչ այս պահը: Չի բացառվում, որ եթե իրանական կողմը հրթիռակոծի այդ երկրների տարածքում գտնվող ամերիկյան ռազմաբազաներն ու նավթավերամշակման գործարանները, նրանք ռազմական միջամտության անցնեն եւ համատեղ ամերիկա-իսրայելական ռազմական գործողություններ իրականացնեն: Սակայն աշխարհագրությունը փոխվում է, որովհետեւ, ինչպես տեսանք, պատերազմը հասավ Կասպից ծով»,- ասաց Կարապետյանը: Իսրայելը խոցեց իրանական 5 ռազմանավ, Իրանի գազի խոշորագույն արդյունաբերական հանգույցը, Ադրբեջանի արտգործնախարար Բայրամովը մեկնեց Սաուդյան Արաբիա, եւ Կասպից ծովում ռազմական գործողությունների թեժացումը կարող է էականորեն փոխել պատերազմի ընթացքն ու աշխարհագրությունը: «Այժմ ինտենսիվ աշխատանքներ են տանում՝ նաեւ Թուրքիային ու Ադրբեջանին ներգրավելու ռազմական գործողությունների մեջ, որպեսզի, որպես պոլիգոն, օգտագործեն նաեւ Ադրբեջանի տարածքը: Նաեւ տեսնում ենք, որ իրանական կողմը կարողանում է պատշաճ հակահարվածներ հասցնել եւ զսպել համատեղ իրականացվող օպերացիաները: Իրանն օգտագործել է կեղծ կասետային հրթիռներ, որի արդյունքում Իսրայելի ՀՕՊ համակարգն արձակել է 4 միավոր «Թաադ» կոչվող հրթիռներ, ինչի հետեւանքով 53 միլիոն դոլար՝ հանուն ոչնչի, ուղղակի ի չիք է դարձել: Նրանք արդեն անցել են նման մեթոդաբանության, որն առաջացրել է Թրամփի զարմանքը, որը կարծես քաղաքական անմեղսունակի կարգավիճակ ստանձնած լինի եւ ասում է, որ դա նորմալ չէ, որ Իրանը փակում է Հորմուզի նեղուցը, այդպես չի կարելի, եւ փորձում է ՆԱՏՕ-ին, եվրոպական երկրներին ներքաշել այս պատերազմի մեջ: Սակայն այդ երկրները չեն մասնակցում ռազմական գործողություններին»,- նկատում է միջազգայնագետը:

Թրամփը զարմացել է նաեւ, որ Իրանը թիրախավորել է Մերձավոր Արեւելքի երկրները՝ դա նախատեսված չի եղել: Կարապետյանը կարծում է՝ Թրամփի խորհրդատուներն իրեն ասում են, որ իր գահավիժող ռեյտինգը փրկելու համար պետք է փորձի ցույց տալ, որ հաղթել է, շարքից հանի իրանական ենթակառուցվածքները, դադարեցնի միջուկային ծրագիրը եւ օր առաջ կանգնեցնի ոչ շահեկան պատերազմը: Հնարավո՞ր է Ռուսաստանն էլ դառնա պատերազմող կողմ, Կարապետյանը ոչինչ չի բացառում, նաեւ՝ Չինաստանի մասով: Իրանի դաշնակիցները դեռ ռազմական գործողություններին բացեիբաց չեն մասնակցում՝ կուլիսային օգնություն՝ տվյալներ են տրամադրում: «Քանի դեռ Իրանի համար, Իրանի ժողովրդի, Իրանի պետականության համար էքզիստենցիալ վտանգներ չկան, չեմ կարծում, որ նրանք մասնակից կլինեն, որքան էլ լուրջ վնասներ է կրում Իրանը, նրա ենթակառուցվածքները, այդուհանդերձ, կարողանում են դիմագրավել: Անգամ այս պահին Իրանն է թելադրում պատերազմի դադարի պայմանները»,- շեշտում է մեր զրուցակիցը:

ԱՄՆ պատերազմի նախարարությունը Կոնգրեսից 200 միլիարդ դոլար է խնդրում՝ Իրանի դեմ պատերազմը շարունակելու համար: Թե որքան կդիմանա Իրանը, միջազգայնագետը վկայակոչում է իրանական պաշտոնական տվյալները՝ մինչեւ սեպտեմբեր, հոկտեմբեր կարող են ինտենսիվ ռազմական գործողություններ իրականացվել: «Այսինքն՝ իրենց արսենալը եւ պոտենցիալը թույլ են տալիս: Հարց է՝ արդյո՞ք իսրայելա-ամերիկյան տանդեմը պատրաստ է մինչեւ սեպտեմբեր ե՛ւ հարձակողական, ե՛ւ պաշտպանողական ինստենսիվ գործողություններ իրականացնել: Թեհրանը համաձայն չէ հրադադարի, եթե չեն բավարարվելու իր 4 նախապայմանները: Դրանք են՝ լիարժեք միջուկային ծրագիր ունենալու իրավունքի ամրագրում, տնտեսական պատժամիջոցների ամբողջական չեղարկում, պատերազմի ընթացքում Իրանին հասցված վնասի լիակատար փոխհատուցում կամ, այսպես կոչված, ռազմատուգանքի վճարում եւ ուրանի հարստացում: Մի նախապայման էլ կա, որն ուղիղ չի բարձրաձայնվում, սակայն փաստացի իրականացվում է՝ Հորմուզի նեղուցի ամբողջական ղեկավարում Իրանի կողմից՝ փակ եւ բաց պահելը»:

Ամերիկյան կողմն անում է ամեն ինչ, որ այս պայմանները չկատարվեն, Հորմուզի նեղուցը բացելն էլ համարում է այն երկրների խնդիրը, որոնք այդտեղից նավթ են ստանում: Իսկ նեղուցը համաշխարհային նավթային հոսքի գլխավոր զարկերակն է. աշխարհի ծանր նավթի 20-30 տոկոսն այնտեղով է անցնում: Հետեւաբար, նավթի գները կտրուկ կաճեն, եթե այսպես շարունակվի, իսկ եթե Բաբ-Էլ-Մանդեպի նեղուցը փակվի, Սուեզի ջրանցքով կդադարի առեւտուրը, եւ դա լուրջ խնդիր կառաջացնի Թրամփի համար, ուստի հասունացել է պահը, որ ՆԱՏՕ-ն միջամտի, սակայն ՆԱՏՕ-ի անդամ երկրները հրաժարվում են: Եվ Թրամփի խոսքերից կարելի է եզրակացնել, որ արդեն խոսք է գնում ՆԱՏՕ-ի՝ որպես կառույցի գոյության մասին:

«Պատերազմի ընթացքը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ն այլեւս չի վերահսկում իրավիճակը: Հորմուզի նեղուցը բացելու անհնարինությունը, միջազգային շուկայում առաջացած ճգնաժամն ամերիկա-իսրայելական տանդեմի տագնապն ու ցայտնոտն են առաջացրել: Ամերիկյան կողմի հաշվարկները՝ բլից կրիգով արագ խնդիրը լուծելու, խափանվել են: Ստացվում է, որ Վաշինգտոնն անկարող եղավ իրագործել այդ ծրագիրը. միջուկային ծրագիրը գործում է, Թեհրանն ունի հարստացված ուրանի պաշարներ, Իրանի դեմ ժողովրդական ապստամբություն չեղավ, պատերազմի պատճառով ԱՄՆ-ի ներքին ճակատում լարվածություն ստեղծվեց, ասում են, որ Թրամփն օր առաջ պետք է լքի նախագահի պաշտոնը: Այն, որ մտածում էին, թե Իրանի հոգեւոր, ռազմաքաղաքական ղեկավարներին ոչնչացնելով հարցը կլուծվի, եւ Իրանը հոգեւոր պետությունից աշխարհիկ պետություն կդառնա, իրանցիները Թրամփի խոսքերով չտարվեցին: Թրամփը չհասկացավ, որ Իրանն այնքան խորքային պետություն է, որ մեկ բարձրաստիճան ղեկավարն ամենաքիչը 7-9 փոխարինող ունի, որ մեկի սպանության դեպքում հաջորդը շարունակում է նախորդի գործը, որ մինչեւ վերջին շունչը չեն հանձնվում, ոչ մի թիզ չեն նահանջում Իրանի շահերից, իրենց ընտանիքներին չեն փախցնում երկրից, անգամ երբ Ալի Լարիջանիին սպանեցին՝ իր որդու հետ: Իրանի իսլամական հեղափոխության կորպուսը նախազգուշացնող կոչ է արել՝ Սաուդյան Արաբիայի նավթավերամշակման գործարանից հեռանա քաղաքացիական բնակչությունը, Ալ Հոսնի գազի հանքավայրին, Ռաս լաֆանի ՝ Քաթարում գտնվող նավթավերամշակման գործարանին պիտի հարվածեն: Մարդիկ շիտակ հայտարարում են, որ այս օբյեկտներին հարվածելու են»,- ասաց Կարապետյանը:

ԱՄՆ-ն Աֆղանստանում 20 տարուց ավելի գործողություններ իրականացրեց, ինչն իրեն արժեցավ 2,3 տրիլիոն դոլար: Այն ժամանակ Աֆղանստանի բնակչությունը 40 միլիոն էր, իսկ Իրանն 90 միլիոնանոց խորքային պետություն է:

Հայկա
ԱԼՈՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԵՎ ԻՆՉՈՎ ԿՀԻՇՎԻ ԻԼՅԱ 2-ՐԴ ՊԱՏՐԻԱՐՔԸ



Մարտի 17-ին, կյանքի 94-րդ տարում մահկանացուն կնքեց Վրաց ուղղափառ եկեղեցու ղեկավար Իլյա 2-րդ կաթողիկոս-պատրիարքը (աշխարհիկ անունով՝ Իրակլի Գուդուշաուրի-Շիոլաշվիլի): Վրաստանը թեեւ աշխարհիկ պետություն է, հայտարարվել է ազգային սուգ: 1991 թ. Վրաստանի վերաանկախացումից ի վեր՝ երկիրը մի քանի նախագահ է փոխել, բազմաթիվ վարչապետներ, պետական կառավարման մոդելներ, անցել է 2 էթնո-քաղաքական հակամարտության միջով, որոնք մերթ «սառեցված» են եղել, մերթ «թեժացել» են, տեսել է թե՛ քաղաքացիական բախումներ, թե՛ «գունավոր հեղափոխություն»:

Սակայն Վրաց ուղղափառ եկեղեցին՝ իր գահակալով, մնացել է անսասան ու մի տեսակ դարձել ազգային կայունության եւ հարատեւության սիմվոլ: Իլյա 2-րդը Վրաստանում ամենաբարձր վարկանիշն ու հեղինակությունն ունեցող անձն էր, ու նրա վարկանիշին շատերն էին նախանձում՝ իշխանությունից, թե ընդդիմությունից: Առհասարակ, եթե փորձենք ամփոփել հանգուցյալ կաթողիկոս-պատրիարքի կերպարը, ապա պետք է ասենք, որ բավականին հմուտ դիվանագետ է եղել: Վրաց ուղղափառ եկեղեցու ղեկավար է դարձել 1977 թվականից: Կարելի է ասել՝ մի ողջ դարաշրջան անցել է նրա հովվապետական գավազանի ներքո: Նրան մեր հայկական իրականության մեջ կարելի է համեմատել Վազգեն 1-ին Ամենայն հայոց կաթողիկոսի հետ: Իլյա 2-րդի օրոք Վրաց եկեղեցին աստիճանաբար դուրս է գալիս ստվերից, սկսում ակտիվացնել իր գործունեությունը, կարողանում է լցնել հասարակության մեջ առաջացած գաղափարական վակուումը: Ընթացիկ տարին սիմվոլիկ է Վրաստանի եւ վրաց ժողովրդի համար: Տոնելու են Վրաստանի քրիստոնեականացման 1700 ամյակը: Ու Իլյա 2-րդը մահկանացուն կնքեց հենց այս սիմվոլիկ տարում: Վրաստանում սա կարեւոր հոբելյան է:

Պատմության մեջ նա թերեւս կմնա որպես Վրաց եկեղեցու ամենատեւական հովվապետություն ունեցած կաթողիկոս-պատրիարքը: Միաժամանակ նաեւ՝ կմնա որպես ազգային-եկեղեցական գործիչ, որը կարողացել է համադրել իր մեջ այնպիսի հատկանիշներ, որոնք առաջին հայացքից խիստ դժվար համադրելի են, չասելու համար՝ անհամադրելի, ինչպես իր հոդվածում նկատում է քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը: Իլյա 2-րդի կերպարում համադրված էին քրիստոնեական-եկեղեցական ծառայությունն ու վրացական հայրենասիրությունը, պետական ազգայնականությունն ու սոցիալական պահպանողականությունը, Ռուսաստանի եւ Մոսկվայի պատրիարքության հետ հարաբերությունների պահպանումը՝ այնպիսի զգուշավորությամբ, որ ռուս-վրացական քաղաքական հարաբերությունների ներկայիս բացակայության կամ լարվածության պայմաններում տարատեսակ հակոտնյա մեկնաբանությունների տեղիք չտա, թեեւ մշտապես Ռուսաստանի քաղաքական իշխանությունների նկատմամբ իր բացասական վերաբերմունքն արտահայտել է աքխազական եւ հարավօսական հիմնահարցերի առնչությամբ: Միաժամանակ՝ ողջունելով Վրաստան պետության արեւմտյան աշխարհաքաղաքական ընտրությունը՝ նա մշտապես խիստ քննադատության է ենթարկել արեւմտյան ժամանակակից արժեքները՝ մատնանշելով դրանց հակասությունները քրիստոնեական ավանդական պատկերացումների եւ արժեքների հետ: Եվ, որ ամենակարեւորն է՝ կարողացել է միշտ վեր կանգնել օրվա քաղաքական կամ նույնիսկ գեոպոլիտիկ կոնյունկտուրայից, դառնալ մի տեսակ համազգային ու համավրացական միասնության խորհրդանիշ ու արբիտր, հույս է ներշնչել իր կերպարով եւ փոխզիջումային լուծումների դուռը միշտ բաց պահել բոլորի համար:

Նարեկ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ՄԻ ԽՈՒՄԲ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԽՆԴՐԱԼԻՑ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Մենք՝ ներքոստորագրյալ լրագրողներս, խմբագիրներս, մեկնաբաններս եւ, առհասարակ՝ երբեմն մտածող, երբեմն պարզապես գրող արարածներս, խոնարհաբար դիմում ենք Ձերդ Վսեմությանը, խնդրելով ձեզ՝ մեզ տրամադրել բառարան, որը կհաստատվի անձամբ Ձեր կողմից, կկնքվի պետական կնիքով եւ կպարունակի այն բառերի, բառակապակցությունների ու նախադասությունների ցանկը, որոնք թույլատրելի են կիրառել՝ առանց Քրեական օրենսգրքի թիրախ դառնալու եւ հրապարակային կոչերի համար դատվելու հեռանկարի:

Քանզի մենք խիստ շփոթված ենք: Օրինակ՝ եթե որեւէ հանրահավաքում մի քաղաքացի (թողնենք նրա անունը, որ հանկարծ ինքն էլ չդառնա ապացույց) ասում է՝ «կորչի Նիկոլը», մենք դա մեջբերո՞ւնք, թե՞ ինքնագրաքննություն կիրառենք՝ գրելով. «Բանախոսն ուզում է, որ Նիկոլն այլեւս չզբաղեցնի վարչապետի պաշտոնը»: Ճիշտ է՝ այդ տարբերակը կորցնում է իր էմոցիոնալ գույնը, բայց նաեւ վնասում է լրագրողական ճշգրտությանը: Իսկ գուցե «թող անհետանա» ձեւակերպո՞ւմը կիրառենք, թե՞ դա էլ կարող է բռնության կոչ դիտվել: Իսկ «հեռանա» բառն արդյոք չի՞ պարունակում իշխանափոխության ենթատեքստ: Խնդրում ենք հստակեցնել, քանզի մեր հայոց լեզվի իմացությունը, ինչպես պարզվում է, բավարար չէ պետական անվտանգության չափանիշներին համապատասխանելու եւ չդատվելու համար:

Վսեմաշուք մեր տեր, մեզ նաեւ մտահոգում է մեջբերման ինստիտուտը: Եթե մի պաշտոնյա, օրինակ, ասում է՝ «ականջդ կկտրեմ» կամ «լեզուդ քոքից կպոկեմ», եւ մենք դա մեջբերում ենք, հնարավո՞ր է, որ այդ հայտարարությունն անողին ոչինչ չսպառնա, իսկ մեջբերելը քրեորեն պատժելի արարք դիտվի՝ որպես բռնության կոչի հրապարակային կոչ: Կամ՝ եթե Դուք, ներողություն մեր համարձակության համար, ասում եք՝ «ասֆալտին կփռեմ», «պատերին կծեփեմ», եւ մենք այդ արտահայտությունները տպագրում ենք, արդյոք մենք ե՞լ ենք սկսում ինչ-որ բան փռել կամ ծեփել:

Դուք ժամանակին ժողովրդին կոչ էիք անում դուրս գալ փողոց, պայքարել, ընդվզել, եթե հարկ լինի՝ նաեւ կտրուկ միջոցների դիմել: Մենք դա անվանում էինք «հեղափոխություն» փաղաքշական տերմինով, բայց այսօր, երբ նույն բառերը հնչում են այլոց շուրթերից, պարզվում է՝ դրանք արդեն «բռնի իշխանափոխության կոչեր» են՝ սահմանադրական կարգի տապալմանն ուղղված: Արդյո՞ք բառերն իմաստափոխվել են, թե՞ խոսողներն են փոխվել: Եթե խոսողներն են փոխվել, ապա խնդրում ենք տրամադրել թույլատրելի խոսողների ցանկը: Մենք կաշխատենք մեջբերումներ անել միայն նրանցից: Եթե խնդիրը ժամանակն է, ապա խնդրում ենք նշել այն ժամկետը, թե երբ որեւէ արտահայտություն կորցնում է իր քրեական վտանգավորությունը: Օրինակ՝ 2008 թվականի արտահայտություններն արդեն անվտանգ են, թե՞ դեռ պահվում են որպես ակտիվ ական: Այն ժամանակվա Ձեր խոսքերն ի՞նչ էին՝ լեզվական վարժությո՞ւն, թե՞ ժողովրդավարական «աէրոբիկա»: Մենք հիշում ենք ոչ միայն Ձեր խոսքերը, այլեւ՝ դրանց հետեւանքները: Հիշելը, բարեբախտաբար, դեռեւս քրեականացված չէ:

Դուք ասում եք՝ պայքար, բռնության կոչեր չի կարելի տարածել: Մենք ողջունում ենք, բայց մի փոքր շփոթվում ենք մեթոդաբանությունից, երբ նույն բառապաշարը մեկի մոտ դառնում է քրեական գործ, իսկ մյուսի մոտ՝ քաղաքական ոճ, սկսում ենք մտածել՝ գուցե «աղվեսի պոչը» բառերի մեջ չէ, այլ... հեղինակային իրավունքի: Այսինքն՝ որոշ արտահայտություններ պաշտպանված են, եւ դրանց օգտագործումը թույլատրելի է միայն «բնօրինակ հեղինակին»: Եթե այդպես է՝ խնդրում ենք հրապարակել ցանկալի հեղինակների ցանկը:

Վսեմափայլ մեր տեր, մեզ հատկապես հուզում է նաեւ ընթերցողների ճակատագիրը: Եթե մենք հրապարակենք մի նյութ, որը, ըստ Քննչական կոմիտեի, պարունակում է «բռնի իշխանափոխության կոչեր», ապա հնարավո՞ր է, որ պատասխանատվության ենթարկվեն այն քաղաքացիները, որոնք կարդացել են տվյալ նյութը, ովքեր «հավանել» են կամ «կիսվել»: Առավել վտանգավորները, թերեւս, նրանք են, ովքեր հասկացել են: Եվ ինչպե՞ս պետք է բացահայտվի հանցագործների այդ կուռ շղթան, որ ձեր իշխանությանը վտանգ չսպառնա: Չէ՞ որ պայքարը պետք է լինի համապարփակ, տիտանական եւ բազմամարդ: Դատարանները կաշխատեն, համակարգը կշարժվի, եւ մեր երկիրը վերջապես կդառնա այն, ինչի մասին մենք վաղուց լսում ենք՝ ժողովրդավարության բաստիոն:

Վսեմաշուք մեր տեր, մեզ մեղադրում են, թե փորձում ենք հակասություններ գտնել Ձեր խոսքերում: Դա զրպարտություն է: Մենք ոչինչ չենք փնտրում: Դրանք... ինքնուրույն հայտնվում են: Երբ նույն թեմայի շուրջ Ձեր ասածը մեկ րոպե անց փոխվում է, մենք կանգնում ենք փաստի առաջ եւ չգիտենք՝ դրանցից ո՞ր տարբերակն է քերականապես եւ քրեականապես անվտանգ՝ մեջբերելու համար: Խնդրում ենք տրամադրել վերջին տարբերակի վերջնական տարբերակը: Չէ՞ որ Դուք եք մեր Վսեմաշուք Լեզվաբանը:

Մեզ նաեւ հետաքրքիր է՝ «ռեժիմի ոչնչացում» արտահայտությունը պե՞տք է թարգմանել ավելի մեղմ տարբերակով, օրինակ՝ «ռեժիմի բարելավման ինտենսիվ գործընթաց»: Իսկ ոմանք որ Ձեզ ասում են, իբր՝ «արմատ չունի», այդ ձեւակերպումն արդյոք չի՞ պարունակում վտանգավոր բուսաբանական ենթատեքստ, հաշվի առնելով, որ արմատ չունեցող ծառերը, ինչպես հայտնի է, կարող են տապալվել: Իսկ տապալվելուց երբեմն նաեւ վնասվում են: Մենք չենք ցանկանում, որ որեւէ մեկը տապալվի մեր տեքստերի պատճառով, առավել եւս՝ ֆիզիկապես:

Մեր արդարամիտ տեր, մենք չենք ուզում քրեական հետապնդման ենթարկվել, բանտում հայտնվել, զրկվել աշխատատեղից ու եկամտի աղբյուրից, մենք պարզապես ուզում ենք լրագրողական գործունեությամբ զբաղվել: Մենք ուզում ենք պահպանել այն պատրանքը եւ հիշողությունը, որ ազատ խոսքը դեռեւս գոյություն ունի Հայաստանում: Բայց եթե դա անհնար է, ասեք բացահայտ: Ասեք՝ լռե՛ք: Քանզի մենք գիտենք, որ լռությունը դեռեւս քրեականացված չէ: Բայց չենք կողմնորոշվում, թե ինչպես անենք, որ մեր խոսելը չքրեականացվի: Սահմանեք քերականական այն սահմանը, որտեղից սկսվում է քրեական իրավունքը: Դա մեծ ներդրում կլինի ոչ միայն իրավագիտության, այլեւ լեզվաբանության մեջ: Հնարավոր է՝ նոր ճյուղ ծնվի՝ քրեալեզվաբանություն:

Որովհետեւ, համաձայնեք, մի փոքր տարօրինակ է, երբ նույն բառամթերքը մեկի դեպքում հեղափոխություն է, մյուսի դեպքում՝ քրեական գործ, պետական հանցագործություն, պետությանն ուղղված սպառնալիք:

Խոնարհմամբ՝ դեռեւս գրող լրագրողներ (անթիվ ստորագրություններ)
Լրագրողների նամակը գրա առավ Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆԸ

ԻՆՉ ԹԵՄԱՆԵՐ ԷԻՆ ԸՆՏՐՈՒՄ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ՄԵԿՆԱՐԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1890-ականներին Լյումիեր եղբայրների կողմից կինեմատոգրաֆի ստեղծումից հետո, նկարահանվող ֆիլմերն աստիճանաբար սկսում են ձեռք բերել ժանրային բազմազանություն: Կինոարվեստի պատմության մեջ կարեւոր տեղ ունեն պատմական կինոնկարները, որոնց իմաստն իրական պատմական ժամանակաշրջանի վերարտադրությունն է եւ մարդկության պատմական հիշողության վիզուալիզացիան: Սակայն, ինչպես նշում են կինոգետներն ու կինոյի պատմության մասնագետները, պատմական ժանրի կինոնկարները եթե փաստավավերագրում չեն, ապա վերոնշյալ պատմական հիշողության գեղարվեստական մեկնաբանություն են ապահովում:

Արդեն կինոարվեստի արշալույսին ի հայտ են գալիս առաջին ժապավենները, որոնք անդրադառնում են պատմական իրադարձություններին եւ պերսոնաժներին: Դրանցից է, օրինակ, 1897 թվականին Էկրան բարձրացած «Մարաթայի մահը» կինոնկարը, որը մասնագետները համարում են պատմական իրադարձությունների գեղարվեստական վերակերտման առաջին փորձերից մեկը:

1890-1900-ական թվականներին պատմական թեմաներին եւ պերսոնաժներին նվիրված կինոնկարներն ինքնուրույն ժանր դեռ չէին դարձել, դրանք կարճամետրաժ տեսարաններ էին կամ «կենդանի պատկերներ», որոնք հաճախ ներշնչված էին թատերական ներկայացուցիչներից: Սակայն արդեն այդ ժամանակ կիրառվում էին դարաշրջանին հատուկ դեկորացիաներ, կոստյումներ, պատկերվում էին իրական պատմական ֆիգուրներ, փորձ էր արվում անցյալի իրադարձությունները դրամատիզացնել: Այսինքն, արդեն կինոյի արշալույսին՝ պատմական թեմաներին անդրադառնալիս, աստիճանաբար ձեւավորվում էին այն սկզբունքները, որոնք պետք է դառնային պատմական կինոյի ժանր: 1900-1910-ականներն ընդունված է համարել պատմական կինոյի ժանրի ձեւավորման շրջան: Այս ընթացքում արդեն բոլոր այն հիմնական երկրներում, որտեղ կինոն հիմնավորվում է, աստիճանաբար նկարահանվում են առաջին պատմական թեմաներին անդրադարձող ժապավենները: Ռուսաստանում, օրինակ, առաջին պատմական ժապավենը Ստեփան Ռազինին նվիրված կինոնկարն էր, որը նկարահանվել է 1908 թվականին: Ապա արդեն նկարահանվում են «Ասք վաճառական Կալաշնիկովի մասին», «Իվան Ահեղի մահը», «Պետրոս Մեծ», «Սեւաստոպոլի պաշտպանությունը» կինոնկարները՝ 1909-11 թթ.: Այս կինոնկարներում կարճ տեսարաններին փոխարինելու են գալիս ավելի ծավալուն բեմականացումները՝ դարաշրջանին հատուկ էլեմենտների վերականգնումով:

Եվրոպայում եւս՝ Գերմանիա, Ֆրանսիա, պատմական կինոնկարներն աստիճանաբար դառնում են դիտարժան բեմականացումներ, որտեղ ներմուծվում են մասսայական տեսարաններ, բարդ դեկորացիաներ: 1910-ական թվականների վերջերին ի հայտ են գալիս, այսպես կոչված, «կոստյումավորված կինոնկարները», որտեղ, բացի դեկորացիաներից, նաեւ ժամանակին հատուկ հագուկապն էր վերականգնված:

Առհասարակ, պատմական ժանրի կինոնկարների այդքան վաղ ի հայտ գալուն նպաստել են մի շարք գործոններ: Նախ, արդեն պատրաստի սյուժե կար՝ ի դեմս այն պատմական պերսոնաժի կամ իրադարձության, որը պետք է վերապատմվեր գեղարվեստական մեկնաբանությամբ էկրանին: Սցենարային աշխատանքը, այսինքն, մասամբ արված էր: Բացի այդ, պատմական ֆիլմերը շատ դիտարժան էին ժամանակի եւ միջավայրի վերականգնման, ճակատամարտերի վերստեղծման, հայտնի պատմական անձերի վերակենդանացման շնորհիվ: Եվ, բացի այդ, պատմական կինոնկարներն ունեին լուրջ կրթադաստիարակչական նշանակություն եւ գաղափարական պոտենցիալ: 1910-20-ականներին արդեն պատմական կինոժանրը նոր մակարդակի է բարձրանում՝ զարգացում ապրելով: Ասպարեզ են իջնում ժանրում ստեղծագործող այնպիսի ռեժիսորներ, ինչիսիք են՝ Սերգեյ Էյզենշտեյնն ու Դեւիդ Վորք Գրիֆիթը: Նրանց աշխատանքներն աչքի էին ընկնում եւ՛ դրամատուրգիայով, եւ՛ ծավալներով, եւ՛ բարդությամբ ու նորարարական մոնտաժային ու լուսային ներմուծումներով, որով ժանրն արդեն ամբողջապես կայացավ եւ մտավ կինոարվեստի «ընտանիք»՝ որպես առանձին բաժին:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿՐԿԻՆ ՄԱՀ «ԱՐՄԱՎԻՐՈՒՄ»՝ ԿԱՐԱՆՏԻՆԻ՞, ԹԵ՞ ՄԱՀՎԱՆ ԽՈՒՑ



Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Վտոճանապարհային խախտման համար 7 ամսվա ազատազրկման դատապարտված Գեղամ Պետրոսյանի առողջական վիճակը խիստ ծանր է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, եւ ո՛չ ՔԿՀ ղեկավարությունը, ո՛չ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը նրան չեն օգնում:

Բանն այն է, որ Գեղամ Պետրոսյանն ունի երիկամների քրոնիկ անբավարարություն՝ օրգանիզմում ազոտ է կուտակվում: Հունվարի 9-ին նա սրտի կանգ է ունեցել: Իրավիճակը բարդանում է նրանով, որ, ալերգիա ունենալու պատճառով, սովորական դեղամիջոցները միայն վատթարացնում են դատապարտյալի վիճակը:

Սուր նոպայից հետո Գեղամ Պետրոսյանին տեղափոխել են քաղաքացիական հիվանդանոց, հետազոտություններ են արվել «Աստղիկ» ԲԿ-ում, սակայն ո՛չ այս բուժհաստատությունը, ո՛չ մյուսները՝ «Էրեբունի», «Իզմիրլյան», «Արմենիա» ԲԿ-ները, չեն ընդունել Պետրոսյանին: Այս մասին «Հրապարակի» հետ զրույցում պատմեցին դատապարտյալի հարազատները:

«Մեզ ասացին ՊՈԱԿ-ից, որ ոչ մի հիվանդանոց չի ուզում դատապարտյալ ընդունել: «Աստղիկ» ԲԿ-ում ասել են՝ դատապարտյալ է, չենք ընդունում, «Էրեբունի», «Իզմիրլյան», «Գրիգոր Նարեկացի» ԲԿ՝ ոչ մի տեղ չեն ընդունել: Մեզ ՊՈԱԿ-ից ասում են՝ բոլոր հիվանդանոցները մերժել են, հիվանդանոց գտեք՝ տանենք: Բայց ես որտեղի՞ց հիվանդանոց գտնեմ: «Աստղիկում» հետազոտություններ են արել, մոտ 60 հազար դրամի, ՄՌՏ եւ այլն, ՊՈԱԿ-ն է արել: Ահագին գումար ծախսեցինք, հակաբորբոքային բուժում պետք է ստանա, սրտի ստենտավորում, բայց մերժել են, որովհետեւ դատապարտյալների հետ չեն աշխատում»,- պատմում է դատապարտյալի կինը:

Նա խնդրել է, որ Քրեակատարողական բժշկության կենտրոնն ազատման ներկայացնի իր ամուսնուն՝ «ակտավորի»: «Գեղամի հիվանդությունները կալանքի հետ անհամատեղելի են, կամ բուժում նշանակեք, կամ ակտիրովկա արեք: Մեզ պատասխանում են՝ որ տուն տանեք, ինչ եք անելու: Կտանենք Գերմանիա, Իսրայել, մի բան կանենք, բայց հիմա ամուսինս մեռնում է բանտում»,- ասում է Գեղամ Պետրոսյանի կինը: Ինքը՝ դատապարտյալը, հացադուլ է հայտարարել՝ պահանջելով բուժում:

ՔԿԾ լրատվականից հայտնեցին. «Դատապարտյալ Գեղամ Պետրոսյանը մարտի 16-ին հացադուլ է հայտարարել եւ ներկայում գտնվում է հացադուլի մեջ, բժշկական հարցերով դիմեք «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ին»:

ՊՈԱԿ-ից մեր զանգերին չպատասխանեցին: Գեղամ Պետրոսյանի ճակատագիրն անորոշ է, առողջական վիճակը կտրուկ վատթարացել է: Նա հայտնել է կնոջը, որ շատ վատ է: «Զանգեց ասեց՝ ես լավ չեմ, ճնշումս հելել ա 170, շատ վատ եմ, կարող ա մնամ տեղում: Նա որ վատանում է, անալգին-դիմեդրոլ են անում: Բերդում հրահանգ կա՝ նրան ոչ մի դեղ չանել, ռիսկային է ալերգիայի պատճառով: Պատկերացրեք՝ ազոտը կտրուկ բարձրանում է, թոքային անբավարարություն է սկսվում, ասթմա, բերանի չորություն ունի, ճնշումը բարձրանում է, շնչահեղձ է լինում: Իրեն «Արմավիրից» էտապ արեցին «Սեւան» ՔԿՀ ու էլի հետ բերեցին: Ո՛չ բուժել կարող են, ո՛չ էլ բաց են թողնում, որ գա տուն: Հիմա բե՞րդ ենք ուղարկել, թե՞ մահվան: Հիվանդանոցները չեն ընդունում դատապարտյալների, հետո՞ ինչ, որ դատապարտյալ է, ուրեմն պետք է մեռնի՞»,- համարյա լաց է լինում Գեղամի կինը: Նա չի հասկանում, թե ինչու են մարդուն ծայրահեղ ծանր վիճակում պահում, այն էլ՝ հացադուլի մեջ: Անգամ կալանավայրի աշխատողներն են զգուշացրել կնոջը, որ այսպիսի «բուկետ» հիվանդություններով Գեղամը կարող է մահանալ խցում:

Ի դեպ, քրեակատարողական հիմնարկներում մահն արդեն սովորական պատմություն է դարձել: Օրերս նույն՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում կախվել է մի տղամարդ: ՔԿԾ-ից այս տեղեկությունը հաստատեցին՝ նշելով, որ մարտի 17-ին, ժամը 11:00-ի սահմաններում, ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կարանտինային խցում հայտնաբերվել է ս.թ. մարտի 13-ին կալանավորված, 1973թ. ծնված անձը՝ կախված վիճակում: Ըստ մեր աղբյուրների, տղամարդը Գեղամ Պետրոսյանի հետ նույն խցում է եղել:

Երեկ գիշերը՝ մարտի 20-ին, կրկին «Արմավիրի» բերդի կարանտինի խցում կախվելու դեպք է գրանցվել: Սավանով կախվելու փորձ է կատարել մոտ 40 տարեկան դատապարտյալ Թորոս Թորոսյանը, սակայն չի կարողացել ավարտել իր չար մտադրությունը: Խցակիցները կտրել են սավանը եւ փրկել կյանքը: Ինքնասպանության փորձի պատճառն առողջական վիճակն է: Դատապարտյալը մի քանի անգամ դիմել է բուժօգնության համար, բայց ոչինչ չի արվել: Մենք կապ հաստատեցինք «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ փոխտնօրենի՝ Նաիրա Բաբայանի հետ: Նա չցանկացավ ոչ մի հարցի պատասխանել եւ հերթապահ խոսքերը նետեց. «Ինչ պետք է, արվում է»: Մնում է հասկանալ՝ եթե ամեն ինչ անում են, ինչո՞ւ են կալանավայրերում մարդիկ այսքան շատ մահանում:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 21.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԿՈՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԲՈՒԶԱՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ԿԱՐԺԱՆԱՆԱՆ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երեւանի ամենահին թաղամասերից մեկի՝ Կոնդի բնակիչներից մի քանիսը «Հրապարակի» հետ զրույցում իրենց հուսահատությունն ու դժգոհությունն էին հայտնում օրվա իշխանություններից՝ պնդելով, որ իրենց հանում են իրենց տներից, բայց պատշաճ փոխհատուցում չեն տալիս՝ իրենց տունուտեղի, բիզնեսի դիմաց, ոչ էլ թողնում են, որ մարդիկ մնան՝ ապրեն:

Ֆրիկի փողոցում ապրող բնակիչներից մեկը մեզ հետ զրույցում պատմեց, որ տարիներով աշխատել, գումար է հավաքել, խանութ է ստեղծել, որպեսզի ծերության շեմին կարողանա մինիմալ ծախսերը հոգալ ու ապրել, սակայն այժմ իշխանություններն իրեն պատկանող առանձնատունը եւ խանութի տարածքը պետության գերակա շահ են ճանաչել եւ իրենց հանում են, որ տարածքը կառուցապատվի: Մեր զրուցակցի խոսքով՝ իշխանությունները դրդում են, որ կոնդեցիներն «այլ միջոցների» դիմեն եւ արդյունքում բանտ գնան: Մեր 61-ամյա զրուցակիցը, որ ծնված օրվանից ապրում է Կոնդում, մեզ հետ զրույցում ասում է. «Իշխանությունները մեկ քառակուսի մետրի համար առաջարկում են ընդամենը 640 հազար դրամ, բայց զավեշտալին գիտե՞ք, թե որն է. 640 հազարով առնում են, 3,5 միլիոնով վաճառում: Ասում են, որ մեր տարածքում՝ տան ու խանութի տեղը ուզում են մեծ բիզնես կենտրոն սարքեն, չեմ հեռանալու ոչ մի տեղ, թող գան՝ ինձ սպանեն, զոռով հանեն, ինչ ուզում են, թող անեն, չեմ գնալու իմ տնից ոչ մի մետր էն կողմ: Սաղ կյանքս ներդրել եմ էս տան, էս ամեն ինչի վրա, չեմ հագել, չեմ կերել, զրկանքների եմ ենթարկվել, որ մի բանի տեր դառնամ, էսօր ինչ-որ մի անգրագետ եկել, ինձ ասում է՝ վեշերդ հավաքի գնա: Ասում եմ՝ լավ, գնանք, բայց պետք է բավարար չափով՝ համարժեք վճարեք, որ գնանք, էդ կոպեկները, որ տալիս եք, ես որտե՞ղ կարամ դրանով տուն առնեմ: Նույնիսկ Ապարան էդ գնով տուն չեմ կարա առնեմ, ես քաղաքի կենտրոնում ծնվել, մեծացել եմ, հիմա ինձ իմ տնից ո՞ւր եք քշում: Գնահատող որ կազմակերպությանը դիմում ենք, լսում են՝ Կոնդ, հրաժարվում են, ասում են՝ վախենում ենք, եթե պետության գերակա շահ ա ճանաչվել, կքաշվենք, որ խառնվենք էդ գործին: Մինչեւ Եվրոպական դատարան դիմելու եմ, սենց չեմ թողնելու, թող մեկն ինձ իմ տարածքից համարձակվի վտարել»:

Այս ամենը շատ նման է Հյուսիսային պողոտայի կառուցապատման պատմություններին, երբ մարդկանց ուժով հանում էին տներից, եւ այս իշխանությունները դա մինչ օրս հիշեցնում եւ հանդիմանում են Ռոբերտ Քոչարյանին:

Մյուս կոնդեցին՝ քաղաքացի Ա. Կ.-ն, որը մեզ հետ զրույցում կիսվեց իր մտահոգություններով, պնդում է, որ իր 53 քմ տան համար պետությունն ընդամենը 2 միլիոն 300 հազար դրամ է խոստանում: «Էդ գնով ես որտե՞ղ կարող եմ տուն սարքել: Առնվազն մի 20-30 միլիոն փող է պետք, որ կարողանամ 53 քառակուսի մետրանոց տուն սարքել, առը հա, թե դուրս կգանք, կամ մեզ նորմալ վճարում են՝ մեր ունեցվածքի արժեքով, կամ էլ ոչ մի տեղ չենք գնում, թող գան, մեզ զոռով հանեն մեր տներից, տեսնենք կարա՞ն»,- ասում է մեր զրուցակիցը:

Հարցին, թե ինչու է միայն մի քանի ընտանիք պայքարում, ի վերջո՝ Կոնդը փոքր թաղամաս չէ, եւ բնակիչների թիվն էլ փոքր չէ, հարմարվե՞լ են մյուս կոնդեցիները, որ իրենք էլ արժանանալու են Հյուսիսային պողոտայի կամ Ֆիրդուսի բնակիչների ճակատագրին, տեղի բնակիչներից մեկը մեզ պատմեց, որ շատերը համաձայնել են չնչին գումարներով պետությանը վաճառել իրենց տարածքները, քանի որ դրանք եղել են խիստ անմխիթար, հին վիճակում, քարուքանդ, նրանցից շատերն ուղղակի Կոնդի բնակիչ էլ չեն, ուղղակի Կոնդում տարածքներ են ունեցել եւ դրանք հեշտությամբ նվիրել են պետությանը՝ չնչին գումարների դիմաց, իսկ նրանք, ովքեր պայքարում են, մեծ կարողություններ ունեն, թանկարժեք առանձնատներ ու բիզնեսներ, այդ պատճառով էլ չեն ցանկանում իրենց տարիների կուտակածը կոպեկներով հանձնել պետությանը:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am